9(47·925)
Ц - 50

Цебриков.

Ц - Стерн

Ц - Ирвр

Ф. Ник.

1862

1938

$ 20.04

Ա. ԾԱՐԻՄԵԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ե. ՀԱՏՈՐ

Ա. ԳԻՐՔ

ՀԻՆ ԴԱՐԵՐ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

141
ԱԱ
79
2012
9(47.925)
Ա-50

ԳԱՀԻՐԷ
ՏՊԱԳՐ. ՏԱԿՈԲ ՓԱՓԱԶԵԱՆ
1938

Լ. ԱՃԷՄԵԱՆ

9(47.925)
Ա-50

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. ՀԱՐՔ

Ա. ԳԻՐՔ
ՀԻՆ ԴԱՐԵՐ

Ռ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱՀԻՐԷ
ՏՊԱԳՐ. ՏԱԿՈԲ ՓԱՓԱԶԵԱՆ
1938

6481

25825-Կ.Հ.

ՏՊԱՐԱՆ
ՅԱԿՈԲ ՓԱՓԱԶԵԱՆ
ԻՊՐԱՇԻՄ ՓԱՇԱ
ՀԱՐԵՒ ՖԱՒՏ ԹԻՒ 6
1938 ԳԱՇԻՐԵ

ԱԵՐ ՀԱՅԵՐԱՅՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՍՊԱՍԵՒԱՆ
4847-56

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Դասագիրքիս այս շարքը կը հրատարակուի զգացուած պէտքի մը գոհացում տալու նպատակաւ:

Արդարեւ, գաղութահայ ամէն անկիւնէ ազգային պատմութեան յարմար դասագրքի մը պահանջը կը բարձրանայ երկար ատենէ ի վեր:

Չեմ յաւակնիր թէ դասագիրքերուս այս շարքը, զերծ ամէն թերութենէ, պիտի ըլլայ կատարեալ գործ մը, բայց կրնամ ըսել թէ ան օժտուած է կարգ մը առաւելութիւններով:

Նախ, չեմ հետեւած հին մեթոտին, մեր ազգին պատմութեան սկիզբը տանելով մինչեւ ջրհեղեղը: Ես գիտակցաբար մէկ կողմ թողած եմ «Աւանդական» ըսուած մասը, որ լուս իս, պէտք է աւանդուի դպրոցներու խոնարհագոյն կարգերու մէջ, ու շատ եմ պէտք է ձգուի անոր ուսումնասիրութիւնը մեր ցեղային կարգ մը յատկանիշերը երեւան բերելու համար:

Ես հետեւած եմ, ուրեմն, իրական պատմութեան:

Երկրորդ, զգուշացած եմ խնողումներէ, աւելորդաբանութենէ եւ նառէ, աւելի դիւրմբռնելի դարձնելու համար նիւթը:

Երրորդ, ջանացած եմ նիւթը վեր առնել շրջան առ շրջան, տալով գլխաւոր եւ յատկանշական դէմքերն դէպքերը, այս վերջնոց մէջ դնելով պատճառի եւ արդիւնքի կապակցութիւնը:

Չորրորդ, ջանացած եմ որ լեզուն ըլլայ պարզ, դիւրասահ եւ հասկնալի:

Դասագիրքերուս այս շարքը աշակերտին համար է եւ ոչ թէ ուսուցչին։ Ուսուցիչը պէտք է գիտնայ աւելին հոս մէջ բերուածէն, որպէսզի դասը կարենայ ընծայել հետաքրքրական եւ բազմակողմանի։ Հոս կարելի չէր մէջ բերել ամէն ինչ, ոչինչ ձգելով ուսուցչին։

Այս առաջին գիրքը կը սկսի Նախահայաստանէն ու կը հասնի մինչեւ Արշակունիներու, այլ խօսքով Հին Դարերու վերջը։ Դասերու բաժանումը ըրած եմ շաբաթական մէկ պահի հաշուով։

Դասագրքիս երկրորդը պիտի պարունակէ Մարզպաններու շրջանէն մինչեւ Ռուբինեաններու անկումը տեւող շրջանը, այսինքն Միջին Դարերը։

Իսկ երրորդ հատորը՝ Նոր Դարերը եւ ժամանակակից շրջանը, մինչեւ մեր օրերը, մօտաւոր բաժանումով, ընդարձակ ուսումնասիրութեամբ եւ նոր լոյսերու տակ

Ըստ որում գաղութահայ դպրոցներու ծրագիրները յանախ բնաւ նմանութեան եզրեր չունին իրարու հետ, կարելի չէ որոշապէս ըսել թէ որ դասագիրքը, ո՛ր կարգին յարմար է։ Ներկայս սակայն կրնայ պաշտօնական նախակրթարանի Միջին Ա. դասարաններուն։

Ըսի թէ անկարելի է որ այս աշխատութիւնը զուրկ չըլլայ առաւել կամ նուազ թերութիւններէ։ Ուստի, երախտապարտ պիտի մնամ պաշտօնակիցներուս, եթէ հանին իրենց դիտողութիւնները հաղորդել ինձի։

1 Յունիս 1935 Լ. ԱՃԷՄԵԱՆ

Գահիրէ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍ Ա.

ԴԱՍ Ա.

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅԵՐԷ ԱՌԱՋ

ՆԱԻՐ-ՈՒՐԱՐՏՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ.— Հայաստան միշտ հայերէ բնակուած չէ եղեր։ Մեզմէ առաջ հոն բնակած են Նաիր-Ուրարտացիները, իսկ ասոնցմէ ալ առաջ՝ ուրիշ ժողովուրդներ։

Նաիր-Ուրարտացիք կարիճ մարդիկ էին։ Անոնք ինքզինքնին կը կոչէին Խալտի՝ իրենց մեծ աստծոյն՝ Խալտիսի անունով։

ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ.— Սակայն երբ կ'ըսենք Նաիր-Ուրարտացւոց երկիր, պէտք չէ կարծել թէ ան մէկ երկիր էր։ Բեւեռագիր արձանագրութիւններէ ստուգուած է թէ Նաիր-Ուրարտուն բաժնուած էր իրարու դաշնակից եօթը պետութիւններու, որոնք են.—

1. *ՈՒՐԱՐՏՈՒ = Արարատեան նահանգ.*
2. *ԲԻԱՆԱ = Վանի շրջանակ.*

3. ՄԻՆՆԻ = Վանայ և Ուրմիոյ լիճերուն միջև.
4. ՄՈՒՍԱՍԻՐ = Մուշի շրջանակը.
5. ՄԻԼՏԻՍ = Բարձր Հայք.
6. ՆԱԻՐԻ = Վանայ լիճին հարաւը.
7. ՄԵԼԻՏ = Մելիտինէ, Մալաթիա։

Այս երկիրներուն տէրերը նախապէս իրարու հետ շատ բարեկամ չէին, բայց կամաց կամաց զօրացաւ Ուրարտուն և միւս թագաւորութիւնները իրեն դաշնակից դարձնելով, միասին երկար ատեն պատերազմեցան ասորական հզօր կայսրութեան դէմ։

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ.— Նաիր-Ուրարտացիք, ուրեմն, մէկ ժողովուրդ էին։ Ունէին միատեսակ լեզու, միատեսակ կրօնք և սովորութիւններ։ Կային, սակայն, երեք դասակարգեր, որոնք են.— ֆուրմեր, ազնուականներ և բուն ժողովուրդը։

Ֆուրմերը գիտուն և ճարպիկ մարդիկ էին. կրօնաւոր էին, նաև դատաւոր, բժիշկ, աստղաբաշխ, և այլն։

Ազնուականները հողատէրերն էին և իշխանութիւնն ալ իրենց կը պատկանէր։

Իսկ ժողովուրդը, որ մեծամասնութիւնը կը կազմէր, թշուառ գիւղացիներէ կը բաղկանար, որոնք օրն ի բուն պիտի աշխատէին հողատէրին համար։

Նաիր-Ուրարտուի մէջ կային քաղաքներ։ Այդ բնակիչները արհեստներով և առեւտուրով ալ կը զբաղէին։ Արձանագործութիւն, զինագործութիւն, բերդեր և ջրանցքներ շինելու արուեստը առաջ գացած էր իրենց մէջ։

ԿՐՕՆՔ.— Ուրարտական կրօնքը վախի վրայ հաստատուած չէր, այլ լոյսի գաղափարին վրայ։ Իրենց գլխաւոր աստուածներն էին.—

ԽԱԼՏԻՍ, որ է լոյսի աստուածը,
ՏԷԻՈՒԲԱՍ, երկնքի աստուածը,
ԱՐՏԻՆԻՍ, արեգակ աստուածը։

Կային տակաւին բազմաթիւ ուրիշ աստուածութիւններ, որոնք ունէին իրենց մեհեանները, շքեղ կերպով կառուցուած շէնքեր՝ որոնց աւերակները դեռ չեն պեղուած։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Հայաստան միշտ հայերէ՞ բնակուած է եղեր։ Հայերէ անմիջապէս առաջ ո՞ր ժողովուրդը կ'ապրեր հոն։ Քանի՞ բաժանումներ ուներ Նաիր-Ուրարտուն, որո՞նք էին եւ ո՞ւր կը գտնուէին։ Խպշի ժողովուրդին մէջ քանի՞ դասակարգեր կային եւ ի՞նչ գիտէք անոնց մասին։ Ի՞նչ գիտէք Ուրարտացւոց կրօնքի մասին, ո՞ր գլխաւոր աստուածները գիտէք։

ԴԱՍ Բ.

ՆԱԻՐ-ՈՒՐԱՐՏԱՅԻՈՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԵՒ ՆԱԻՐ-ՈՒՐԱՐՏՈՒԻ ԿՌԻՒՆԵՐԸ.— Քրիստոսէ 1410 տարի առաջ, Ասորեստանի թագաւորն էր Ասուր-ու-Բալիդ որ Նաիր-Ուրարտուի վրայ արշաւած է և իր արձա-



Բեւեռագիր արձանագրութեան նմոյշ մը

նագրութիւններուն մէջ յիշած է այս երկրին անունը։

Սաղմանասար Ա. նորէն արշաւելով Նաիրիի

վրայ տիրեր է անոր մէկ մասին։ Իսկ Թագ-ղաթ-Փաղ-Ասար հզօր թագաւորը երեք անգամ արշաւեր և մեծամեծ վնասներ տուեր է։ Հակառակ ասոր սակայն, ան չկրցաւ տկարացնել Նաիր-Ուրարտուն։ Ընդհակառակը, իր երկիրը տկարացաւ և Նաիր-Ուրարտուն երկու հարիւր տարիի չափ խաղաղ ապրեցաւ։

885ին Ասորեստանի թագաւոր կ'ըլլայ Ասուր-Նազիր-Ապալ, որ չորս անգամ կ'արշաւէ Նաիրիի վրայ և մեծամեծ անգթութիւններ կը գործէ։ Ինք արձանագրած է իր ըրածները, որոնց եթէ հաւատանք ա՛լ մարդ մնացած պիտի չըլլար Նաիրիի մէջ։

ԱՐԱՄԷ.— Բայց ահա մէջտեղ կ'ելլէ Ուրարտուի թագաւորը քաջն Արամէ, որ կը հիմնէ թագաւորական նոր հարստութիւն մը՝ Արամեան Հարստութիւն անունով։ Ասորեստանի Սաղմանասար Բ. թագաւորը երեք անգամ իր դէմ պատերազմի կուգայ, բայց Արամէ միշտ քաջաբար կը դիմադրէ։ Ասորեստանի այս թագաւորն ալ մեծ գովասանքներով կը խօսի իր տարած յաղթանակներու մասին, բայց ասիկա Ասորեստանի թագաւորներուն սովորութիւնն էր։

Արամէի հիմնած թագաւորութիւնը տեւեց երկու հարիւր ութսուն տարի, մինչև Ք. Ա. 580 թուականը։

Այս նոր շրջանը կրնանք բաժնել երկու մասի. առաջինը՝ մեծութեան, հզօրութեան և յաջողութիւններու շրջան, երկրորդը՝ (724էն յետոյ) տկարացման և անկման շրջան, որ վերջացաւ Արմէններու արշաւանքովը։

Առաջին շրջանին մէջ Ուրարտուի թագաւորները իրենց միացուցին Նաիրին, դաշնակից ըրին միւս թագաւորութիւնները ու կարողացան մեծ պատերազմներ մղել Ասորեստանցւոց դէմ, և երբեմն նոյնիսկ անոնց երկիրները արշաւել։

Ասորական հզօր կայսրութեան ամենամեծ թշնամիները Նաիր-Ուրարտացիները եղած են։

Արամէի յաջորդներուն մէջ նշանաւորներն են. Մենուա, Արգիստիս Ա., Սարդուրիս Բ. և Ռուսա Բ.։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Առաջին անգամ ո՞վ յիշեր է Նաիր-Ուրարտուի անունը եւ ինչո՞ւ։ Ասորեստանի ուրիշ ո՞ր թագաւորներ Նաիր-Ուրարտու արշաւած են եւ ի՞նչ բրած են։

Ո՞վ էր Արամէ եւ ի՞նչ բրաւ, որո՞ւ դէմ պատերազմեցաւ ան։ Արամեան Հարստութիւնը քանի՞ շրջանի կրնանք բաժնել, որո՞նք են։ Առաջին շրջանի թագաւորները ի՞նչ բրին։ Արամէի յաջորդներուն մէջ ո՞ր նշանաւոր թագաւորներ կան։

ՄԱՍ Բ.

ԴԱՍ Գ.

ՀԱՅՈՑ ԾԱԳՈՒՄԸ

Մեր աւանդական պատմութեան համաձայն Հայերը եկած են Միջագետքի կողմերէն։ Սակայն գիտնականները այսօր այն կարծիքէն են թէ Հայերը եկած են Եւրոպայէն և ցեղակից են Եւրոպացիներուն։ Անոնք շատ դանդաղ կերպով անցեր են Մարմարա և Եգէական ծովերու վրայէն դէպի Փոքր Ասիոյ կողմը, երկար ժամանակ ապրեր են Փռիւգիա ըսուած երկիրը Փռիւգիացիներու հետ, յետոյ, նեղուելով դրացի ժողովուրդներէն, Քրիստոսէ 8—10 դար առաջ անցեր են Ալիս գետի արեւելեան կողմը և բնակեր Կապադովկիա։ Սակայն հոն ալ շրջակայ ժողովուրդները հանգիստ չեն տուած անոնց և Հայերը կամ Արմէնները, գացեր բնակեր են Գայլ գետի վարի մասերը, ուր հիմնած են առաջին հայկական պետութիւնը։ Այդ երկիրը յետոյ կոչուեցաւ Փոքր Հայք։ Բայց մեր նախնիքը հոս ալ երկար չմնացին, անցան Եփրատի հովիտը, ապա տարածուեցան Երասխի աւազանին

մէջ։ Այս երկիրն ալ կոչուեցաւ Մեծ Հայք։ Ասիկա պատահեցաւ Քրիստոսէ մօտ 6 դար առաջ։

Ըսել է թէ Հայերը Հայաստանի մէջ բնիկ ժողովուրդ չեն, այլ եկուոր։

Այս ատեններ Արամէի հիմնած թագաւորութիւնը շատ տկարացած էր և Նաիր-Ուրարտուն պզտիկցած։ Այսու հանդերձ, անոնք կռիւներ ունեցան Հայերու հետ, յաղթուեցան, շատերը փախան դէպի հիւսիս, իսկ ով որ մնաց խառնուեցաւ նորեկ ժողովուրդին հետ։ Հայեր ուրիշ ժողովուրդներու մնացորդներն ալ ձուլեցին իրենց մէջ և այս կերպով կազմուեցաւ հայ ժողովուրդը, որ 6րդ դարու Բ. կէսին Քրիստոսէ առաջ, արդէն իր պետութիւնը ունէր։

Մենք զմեզ կ'անուանենք Հայ, իսկ օտարները մեզ կը կոչեն Արմեն։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Գիտնականներու կարծիքով Հայերը ուրկէ՞ եկած են եւ ո՞ր տեղերը բնակած են։ Ո՞ւր կը գտնուի Փոքր Հայքը եւ ինչո՞ւ այդպէս կը կոչուի։ Հայերը ե՞րբ հասան Մեծ Հայք։

Երբ Հայերը Նաիր-Ուրարտու եկան ի՞նչ վիճակի մէջ էր Ուրարտացւոց թագաւորութիւնը։ Ի՞նչ բրին Ուրարտուի թագաւորները։

ԴԱՍ Դ.

ՀԱՅԱՍՏԱՆ, ՀԱՅՈՑ ԶԲԱՂՈՒՄԸ

Հայաստան գեղեցիկ երկիր մըն է, ունի շատ մը բարձր լեռներ, բազմաթիւ գետեր և սիրուն լիճեր։

Լեռներէն ամենէն բարձրն է Մասիս կամ Արարատը։ Անկէ փիչ մը հեռու է Արագածը, որ ծածկուած է կանաչութիւններով։ Դէպի արեւմուտք կը գտնուին Բիւրականեան լեռները, որոնք նշանաւոր են իրենց առատ ջուրերովը։ Սիփան լեռը նոյնպէս բարձր լեռ մըն է Վանայ լիճին հիւսիսը։ Տակաւին ուրիշ բազմաթիւ լեռներ ալ կան։ Այս լեռներէն շատերը ծածկուած են անտառներով որոնց մէջ լեցուն վայրի կենդանիներ կան։

Հայաստանի մէջ կան նաև շատ մը բերրի դաշտեր, օրինակ՝ Արարատեան դաշտը, Մուշի և Բասենի դաշտը, և այլն։

Իսկ լիճերէն նշանաւորներն են Վանայ լիճը կամ ծովը, Սեւանայ կամ Գեղամայ լիճը և Ուրմիոյ կամ Կապուտան լիճը։

Հայաստանի կարեւոր գետերն են. Արաքս, Եփրատ, Տիգրիս, Ալիս և Իրիս։

Հայերը շատ սիրեցին իրենց այս նոր հայ-

բենիքը և ա՛լ անկէ չուզեցին հեռանալ։

Անոնք բաժնուեցան դաշտերու մէջ, շինեցին բազմաթիւ գիւղեր, զբաղեցան երկրագործութեամբ և անասուններ պահելով։ Լեռներու վրայ բնակողները քաջ որսորդներ եղան։ Մէկ մասն ալ քաղաքներու մէջ բնակեցաւ, արհեստներով և վաճառականութեամբ զբաղեցաւ։

Հայերը վաճառականութիւն կ՚ընէին իրենց դրացի ժողովուրդներու և հեռաւոր երկիրներու հետ։ Ցամաքի վրայ կը ճամբորդէին կարաւաններով, իսկ Եփրատ և Տիգրիս գետերու վրայով կը ճամբորդէին ճիւղերէ շինուած լաստերով որոնք դուրսէն մորթով կը շրջապատէին։

Հայոց մէջ ընտանեկան կապը զօրաւոր էր և ընտանեկան պատիւը՝ բարձր։

Հին Հայերը կը յարգէին իրենց մեծերը և մեռած նախնիքը։

Հին Հայաստանի գլխաւոր քաղաքներն էին. Արմաւիր, Արտաշատ, Դուին, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Անի, Վան և այլն։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչպիսի երկիր մրն է Հայաստանը։ Որո՞նք են անոր նշանաւոր լեռները։ Ո՞ր դաշտերն ու լիճերը կան Հայաստանի մէջ։ Ո՞ր գետերը։ Ո՞ւր բնակեցան Հայերը եւ ինչո՞վ զբաղեցան։ Ինչպ՞էս կը նաւարկէին։ Որո՞նք էին Հայաստանի հին նշանաւոր քաղաքները։

ԴԱՍ Ե.

ՀԻՆ ՀԱՅՈՑ ԿՐՕՆՔԸ

Շատ հին ժամանակներ բոլոր ժողովուրդներն ալ ճշմարիտ Աստուածը չէին ճանչնար։ Միայն Հրեաները կը ճանչնային ու կը պաշտէին ճշմարիտ Աստուածը։

Հին Հայերն ալ չէին դիտեր ճշմարիտ Աստուածը։ Անոնք կը պաշտէին արեւը, լուսինը, աստղերը, կրակը, ջուրը ևն.։

Կը պաշտէին արեւը, որովհետև անիկա լոյս ու ջերմութիւն կուտար և բոյսերը կ՚աճեցնէր, կը պաշտէին լուսինը, որովհետև անիկա գիշերները լոյս կուտար։ Աստղերը երկինքը կը զարդարէին։ Կրակը և ջուրն ալ շատ օգտակար էին։ Կրակ քոյրն է աղբիւր եղբօրը, կ՚ըսէին։

Ասոնցմէ զատ հին Հայերը կ՚ըսէին թէ կայ աստուած մը՝ Արամազդ անունով, որ ամենէն մեծն է։ Կ՚ըսէին նաև թէ կայ Անահիտ անունով աստուածուհի մը, որ Արամազդի աղջիկն է, և ամէն լաւ բաներ ան կ՚ընէ աշխարհիս վրայ։ Աստուածուհի մըն ալ կայ, կ՚ըսէին, Աստղիկ

անունով, որ լեռներու վրայ կը բնակի և ան է որ դեղեցկութիւն կուտայ։

Հայերը այնքան շատ կը սիրէին Անահիտ ու Աստղիկը որ մինչև հիմա ալ անոնց անունը կը դնենք մեր աղջիկներուն վրայ։

Հայերը շատ կը յարգէին նաև իրենց քաջ նախահայրերն ու դիւցազնները և անոնց մեռնելէն յետոյ, զանոնք կը պաշտէին։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Հին ժողովուրդները ի՞նչ կրօնք ունէին։ Հին ատենները Հայերը ո՞նչ կը պաշտէին։ Ինչո՞ւ կը պաշտէին արեւը, լուսինը, աստղերը, ջուրը եւ կրակը։ Ուրիշ ի՞նչ աստուածներ ունէին Հայերը։

Նաւարկութեան լաստը

ԴԱՍ Զ.

ՀԱՅԱՍՏԱՆ ՄԱՐԱՑ, ՊԱՐՍԻՑ ԵՒ ՍԵԼԵՒԿԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Այս նոր հայրենիքին մէջ Հայերը երկար ժամանակ ապրեցան իրենց թագաւորներու և իշխաններու ձեռքին տակ։ Բայց այդ հին թագաւորներու և իշխաններու կեանքին ու գործերուն մասին որոշ բան մը չենք գիտեր դեռ։

Յետոյ, Հայաստան ինկաւ Մարերու իշխանութեան տակ։ Մարաստանը Հայաստանի արեւելեան կողմը կը գտնուէր և զօրաւոր թագաւորութիւն մըն էր։

Վերջը Պարսիկները տիրեցին թէ՛ Մարաստանի և թէ Հայաստանի։ Պարսիկները աւելի մեծ և զօրաւոր ազգ մըն էին։ Անոնց երկիրը Մարաստանի հարաւը կը գտնուէր։ Հայերը շատ բաներ սորվեցան Պարսիկներէն։

Պարսիկներէն վերջն ալ Հայաստան ինկաւ Սելեւկեաններու իշխանութեան տակ։

Երբ Աղեքսանդր Մակեդոնացին տիրեց ամբողջ հին աշխարհին, Հայաստանն ալ ինկաւ ա-

4847-56

անունով, որ լեռներու վրայ կը բնակի և ան է որ դեղեցկութիւն կուտայ։

Հայերը այնքան շատ կը սիրէին Անահիտն ու Աստղիկը որ մինչև հիմա ալ անոնց անունը կը դնենք մեր աղջիկներուն վրայ։

Հայերը շատ կը յարգէին նաև իրենց քաջ նախահայրերն ու դիւցազնները և անոնց մեռնելէն յետոյ, զանոնք կը պաշտէին։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Հին ժողովուրդները ի՞նչ կրօնք ունէին։ Հին ատեններ Հայերը ո՞նչ կը պաշտէին։ Ինչո՞ւ կը պաշտէին արեւը, լուսինը, աստղերը, ջուրը եւ կրակը։ Ուրիշ ի՞նչ աստուածներ ունէին Հայերը։

Նաւարկութեան լաստը

ԴԱՍ Զ.

ՀԱՅԱՍՏԱՆ ՄԱՐԱՑ, ՊԱՐՍԻՑ ԵՒ ՍԵԼԵՒԿԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Այս նոր հայրենիքին մէջ Հայերը երկար ժամանակ ապրեցան իրենց թագաւորներու և իշխաններու ձեռքին տակ։ Բայց այդ հին թագաւորներու և իշխաններու կեանքին ու գործերուն մասին որոշ բան մը չենք գիտեր դեռ։

Յետոյ, Հայաստան ինկաւ Մարերու իշխանութեան տակ։ Մարաստանը Հայաստանի արեւելեան կողմը կը գտնուէր և զօրաւոր թագաւորութիւն մըն էր։

Վերջը Պարսիկները տիրեցին թէ՛ Մարաստանի և թէ Հայաստանի։ Պարսիկները աւելի մեծ և զօրաւոր ազգ մըն էին։ Անոնց երկիրը Մարաստանի հարաւը կը գտնուէր։ Հայերը շատ բաներ սորվեցան Պարսիկներէն։

Պարսիկներէն վերջն ալ Հայաստան ինկաւ Սելեւկեաններու իշխանութեան տակ։

Երբ Աղեքսանդր Մակեդոնացին տիրեց ամբողջ հին աշխարհին, Հայաստանն ալ ինկաւ ա-

4847-56

նոր իշխանութեան տակ։ Սակայն Աղեքսանդր շուտ մեռաւ և իր ընդարձակ երկիրները բաժնեցան իր հինգ զօրապետներուն միջև, որոնք առանձին առանձին պետութիւններ հաստատեցին։ Հայաստան ինկաւ Սելեւկեաններու իշխանութեան բաժինին մէջ։

Թէ՛ Պարսիկները և թէ Սելեւկեան թագաւորները կառավարիչներ (սատրապ) կը դրկէին մեր երկիրը զայն կառավարելու համար։ Անոնք երբեմն ալ հայ կ'ըլլային։

Քրիստոսէ 190 տարի առաջ, Հայաստանի մէկ մասին վրայ, Սելեւկեաններու կողմէ կառավարիչ էր Արտաշէս քաջ իշխանը, որ նաև հայրենասէր ու աղատասէր էր։

Ան կ'ուզէր Հայաստանը օտարներէ աղատել և թագաւոր ըլլալ։

Ուստի, երբ տեսաւ որ Հռոմայեցիները Սելեւկեաններու վրայ պատերազմի եկած են, ապստամբեցաւ և եղաւ Հայաստանի թագաւոր։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Իրենց նոր հայրենիքին մէջ Հայերը ի՞նչպէս ապրեցան։ Յետոյ Հայաստանը որո՞նց իշխանութեան տակ ինկաւ։ Ո՞վ էր Աղեքսանդր Մակեդոնացին եւ ի՞նչ բրաւ։ Պարսիկներն ու Սելեւկեան թագաւորները ի՞նչպէս կը կառավարէին Հայաստանը։ Ո՞վ էր Արտաշէսը եւ ի՞նչ բրաւ։

ՄԱՍ Գ.

ԱՐՏԱՇԷՍԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍ Է.

ԱՐՏԱՇԷՍ Ա.

Արտաշէսեան Հարստութեան առաջին թագաւորը՝ Արտաշէս Ա. քաջ, խելացի և պատերազմասէր մարդ էր։ Թագաւոր ըլլալէն անմիջապէս յետոյ աշխատեցաւ իր իշխանութեան տակ առնել Հայաստանի այն մասերը որոնք ուրիշ իշխաններէ գրաւուած էին։ Ուր որ գնաց Հայոց քաջ թագաւորը Հայերը սիրով միացան անոր։

Յետոյ, Արտաշէս թագաւորը աշխատեցաւ կարգ ու կանոն դնել իր նոր թագաւորութեան մէջ։ Ան շատ կը սիրէր իր ժողովուրդը և կուզէր որ ան երջանիկ ըլլայ և լաւ ապրի։ Իր օրով երկրագործութիւնը ա՛յնքան յառաջ գնաց Հայոց մէջ, որ հիները կ'ըսէին թէ Արտաշէսի

նոր իշխանութեան տակ։ Սակայն Աղեքսանդր շուտ մեռաւ և իր ընդարձակ երկիրները բաժնեցան իր հինգ զօրապետներուն միջև, որոնք առանձին առանձին պետութիւններ հաստատեցին։ Հայաստան ինկաւ Սելեւկեաններու իշխանութեան բաժինին մէջ։

Թէ՛ Պարսիկները և թէ Սելեւկեան թագաւորները կառավարիչներ (սատրապ) կը ղրկէին մեր երկիրը զայն կառավարելու համար։ Անոնք երբեմն ալ հայ կ'ըլլային։

Քրիստոսէ 190 տարի առաջ, Հայաստանի մէկ մասին վրայ, Սելեւկեաններու կողմէ կառավարիչ էր Արտաշէս քաջ իշխանը, որ նաև հայրենասէր ու ազատասէր էր։

Ան կ'ուզէր Հայաստանը օտարներէ ազատել և թագաւոր ըլլալ։

Ուստի, երբ տեսաւ որ Հռոմայեցիները Սելեւկեաններու վրայ պատերազմի եկած են, ապըստամբեցաւ. և եղաւ Հայաստանի թագաւոր։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Իրենց նոր հայրենիքին մէջ Հայերը ի՞նչպէս ապրեցան։ Ցետոյ Հայաստանը որո՞նց իշխանութեան տակ ինկաւ։ Ո՞վ էր Աղեքսանդր Մակեդոնացին եւ ի՞նչ բրաւ։ Պարսիկներն ու Սելեւկեան թագաւորները ի՞նչպէս կը կառավարէին Հայաստանը։ Ո՞վ էր Արտաշէսը եւ ի՞նչ բրաւ։

ՄԱՍ Գ.

ԱՐՏԱՇԷՍԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍ Է.

ԱՐՏԱՇԷՍ Ա.

Արտաշէսեան Հարստութեան առաջին թագաւորը՝ Արտաշէս Ա. քաջ, խելացի և պատերազմասէր մարդ էր։ Թագաւոր ըլլալէն անմիջապէս յետոյ աշխատեցաւ իր իշխանութեան տակ առնել Հայաստանի այն մասերը որոնք ուրիշ իշխաններէ գրաւուած էին։ Ուր որ գնաց Հայոց քաջ թագաւորը Հայերը սիրով միացան անոր։

Ցետոյ, Արտաշէս թագաւորը աշխատեցաւ կարգ ու կանոն դնել իր նոր թագաւորութեան մէջ։ Ան շատ կը սիրէր իր ժողովուրդը և կուզէր որ ան երջանիկ ըլլայ և լաւ ապրի։ Իր օրով երկրագործութիւնը ա՛յնքան յառաջ գնաց Հայոց մէջ, որ հիները կ'ըսէին թէ Արտաշէսի

օրով կատր մը հող չկար պարապ և ոչ ալ մարդ մը՝ անգործ։

Արտաշէսի ժամանակ կ'ապրէր շատ նշանաւոր մարդ մը՝ Աննիբալ անունով։ Աննիբալ Կարկեդոնի իշխանն էր, մեծ պատերազմներ ըրած էր Հռոմայեցւոյ հետ և շատ անգամ յաղթած անոնց։ Բայց վերջէն յաղթուեցաւ և փախաւ Հայաստան՝ Արտաշէսի մօտ։ Արտաշէս սիրով ընդունեց զայն և բնակութիւն տուաւ։ Կ'ըսեն թէ, օր մը երբ Արտաշէս և Աննիբալ միասին կը պտտէին Երասխ գետին եզերքը, Աննիբալ շատ յարմար տեղ մը տեսաւ և խորհուրդ տուաւ Արտաշէսին որ հոն քաղաք մը շինէ։ Ար-

ԱՆՆԻԲԱԼ

տաշէս, Աննիբալի տուած յատակագծին համաձայն, շինեց այդ քաղաքը որ իր անունով կոչուեցաւ Արտաշատ։ Արտաշատ երկար ատեն Հայոց մայրաքաղաքը եղաւ։ Ան հիմա աւերակ է։

Հայերը այնքան սիրեցին իրենց այս թագաւորը որ անոր վրայ հէքիաթներ ալ շինեցին։ Այս հէքիաթներէն մէկն է Արտաշէսի և Ալաններու պատերազմը։ Արտաշէս յաղթեց Ալաններուն, բայց յետոյ անոնց թագաւորին աղջիկը՝ Սաթենիկը՝ թագուհի առնելով, հաշտուեցաւ անոնց հետ։

Արտաշէս թագաւորեց Քրիստոսէ առաջ 190—161 թուականը։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչպէս մարդ էր Արտաշէս թագաւորը եւ ինչ՞ր ըրաւ։ Ո՞վ կ'ապրէր Արտաշէսի ժամանակ եւ ինչո՞ւ Հայաստան փախաւ ան։ Ի՞նչպէս օգնուեցաւ Արտաշատ մայրաքաղաքը։ Ի՞նչ գիտէք Արտաշէսի եւ Ալաններու պատերազմին մասին։

ԴԱՍ Ը.

ՏԻԳՐԱՆ Գ. ՄԵԾԸ

Արտաշէսեան հարստութեան ամենամեծ թագաւորն է Տիգրան Գ.ը։ Անիկա ամբողջ հայ թագաւորներուն մէջ ալ ամենէն մեծն է և աշխարհի նշանաւոր մարդերէն մէկը։

Արտաշէս Ա. հիմնեց Հայոց թագաւորութիւնը, բայց Մեծն Տիգրան օտարներէն գրաւեց և միացուց ամբողջ Հայաստանը։ Յետոյ, գրաւեց շրջակայ գրեթէ բոլոր երկիրները կամ զանոնք իրեն դաշնակից ըրաւ, և ինք եղաւ Արքայից Արքայ, այսինքն՝ կայսր։

ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ

Դէմքով գեղեցիկ, խելքով մեծ, մարմնով

յպղծանդամ և սրտով ամուր մարդ մըն էր Մեծն Տիգրանը, որ ամէն բան ըրաւ իր նպատակին հասնելու, այսինքն՝ ամենէն մեծ արքան ըլլալու համար։

Բայց Տիգրան ունէր նաև մեծ պակասութիւններ. նախ՝ շատ հպարտ էր և կարեւորութիւն չէր տար ուրիշներու խորհուրդին։ Յետոյ՝ չէր յարգեր ուրիշներու իրաւունքը։ Կը սիրէր շողոքորթները և չիտակ խօսողներէն շատ չէր ախորժեր։ Կ'ըսեն թէ չորս թագաւորներ բռնած էր գերի և երբ ինք իր գահին վրայ նստէր, անոնք, ձեռքերնին կուրծքերնուն, իր քովը պիտի կենային ծառաներու պէս։ Կամ երբ ինք տեղ մը երթար, անոնք իր ձիուն կամ կառքին ետեւէն պիտի վազէին։

Իրեն այս հպարտ և դոռոզ բնաւորութեանը պատճառաւ, հպատակ ազգերը ղինքը շատ չէին սիրեր։ Անոնք կը հնազանդէին Տիգրանին որովհետև կը վախնային անկէ, բայց սրտանց ամէնքն ալ թշնամի էին անոր, մանաւանդ Յոյները։

Եղաւ ատեն մը երբ Տիգրանի կայսրութեանը մէջ էին Կապադովկիան, Կիլիկիան, Ասորիքը, Փիւնիկէն, Միջագետքը, Մարաստանը և այլն։ Եւ իր բանակը կազմուած էր Վրացիներէ, Աղ-

ուանները, Մարերէ, Արաբներէ, Բիւրաներէ ևն.։ Կ'ըսեն թէ Տիգրանի զօրքերուն թիւը կէս միլիոնի կրնար հասնիլ։ Բայց այսպէս բազմաթիւ ազգերէ կազմուած բանակ մը չէր կրնար զօրաւոր ըլլալ։


ՄԱՐԱՍՏԱՆ
ՀԱՅՔ
ԱՍՈՐԻՔ
ՄԻՏԱՆԻ
ՄԻՏՐԴԱՏ
ԱՐՏԱՇԱՏ
ՏԻԳՐԱՆ
ԱՐՏԱՇԱՏ
ԱՐԱՔՍԻ
ԱՐԱՔՍ
ԱՐԱՔՍ
ԱՐԱՔՍ
ՄԱՍԻՍ
ՄԱՍԻՍ
ՄԱՍԻ

Միհրդատ դաշնակից եղած էր Տիգրանին Հռոմայեցւոց դէմ միասին պատերազմելու համար և պայման դրած էին որ երբ յաղթեն՝ երկերը Միհրդատին, իսկ հարստութիւնը Տիգրանին ըլլայ։ Միհրդատ իր Կղեոպատրա աղջիկն ալ կնութեան տուած էր Տիգրանին։ Միհրդատ թշնամի էր Հռոմի, որովհետև չէր ուզեր որ անոնք Ասիոյ մէջ աղդեցութիւն ունենան։

Տիգրան և Միհրդատ նախ գրաւեցին Կապադովկիան որուն թագաւորը Հռոմայեցւոց կողմէն էր։ Բայց Հռոմայեցիք ղրկեցին Սիլլա զօրավարը, որ Կապադովկիան առաւ Միհրդատէն։ Տիգրանի երկու զօրավարները ետ առին երկերը և տուին Միհրդատին, բայց ան նորէն չկրցաւ պահել։

Յետոյ Տիգրան պատերազմեցաւ Պարթեւաց Արտաւան Բ. թագաւորին դէմ։ Ան հին վրէժ ունէր Պարթեւներէն, որովհետև, իր պզտիկութեան ատենը զինք պատանդ տարեր էին և Հայաստանէն շատ մը տեղեր գրաւելէ յետոյ աղատ արձակեր էին։ Տիգրան ետ առաւ այդ տեղերը և Պարթեւաց ձեռքէն ալ ուրիշ երկիրներ։ Պարթեւաց Արքայից Արքայէն ալ խլեց առաջնութեան իրաւունքը և այդ անունով դրամ կարել տուաւ։

Հայաստանի հարաւային կողմը կայ Ասորիք ըսուած երկիրը։ Այս երկրի Սելեւկեան թագաւորները շատ նեղութիւն կուտային իրենց ժողովուրդին։ Ուստի բնակիչները դիմեցին Տիգրանին որ գայ գրաւէ իրենց երկիրը։ Տիգրան գրաւեց Ասորիքը։

Փիչ յետոյ Տիգրան գրաւեց նաև Կիլիկիան։

Յետոյ նորէն գնաց գրաւեց Կապադովկիան և բնակիչներէն 300,000 հոգի բերաւ բնակեցուց իր մայրաքաղաքի՝ Տիգրանակերտի մէջ։

Տիգրան գրաւեց նաև Փիւնիկէն ու պատժեց անոր Սելինէ թագուհին՝ Կիլիկիան ապրստամբեցուցած ըլլալուն համար, իսկ Երուսաղէմի թագուհին բարեկամութիւն խոստացաւ Հայոց թագաւորին։

Հիմա Տիգրան եղած էր Արքայից Արքայ։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ո՞րքան բազաւորեց Մեծն Տիգրան եւ այդ բազաւորութիւնը քանի՞ տարիի կրնանք բաժնել։ Որո՞նց դէմ պատերազմեցաւ Տիգրան, ի՞նչ պատճառաւ եւ ի՞նչ բրաւ։ Ուրիշ ո՞ր երկիրները գրաւեց եւ ի՞նչ բրաւ։ Ինչո՞ւ Տիգրան Արքայից Արքայ կոչուեցաւ։

ԴԱՍ Ժ.

ՏԻԳՐԱՆԻ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Տիգրանի կայսրութիւնը տեւեց միայն 18 տարի, որովհետեւ Միհրդատի պատճառաւ ան նոր պատերազմներու մտաւ Հռոմայեցւոց հետ և վերջ ի վերջոյ յաղթուեցաւ։

ԼՈՒԿՈՒԼԼՈՍ.— Հռոմայեցիք Միհրդատի դէմ ղրկեցին նոր զօրապետ մը Լուկուլլոս անունով. անիկա երկու անգամ յաղթեց Միհրդատին։ Քիչ մնաց որ Միհրդատն ալ գերի իյնար, բայց փախած ատենը ճամբուն վրայ ոսկի և արծաթ փռեց որ Հռոմայեցի զինուորները անոնցմով զբաղին և ինք փախաւ եկաւ Տիգրանի մօտ։ Սակայն Հայոց թագաւորը բարկացած էր անոր և զայն հեռաւոր տեղ մը ղրկեց որ անոր պատճառաւ Հռոմայեցւոց հետ չթշնամանայ։ Բայց անօգուտ։ Լուկուլլոս մարդ ղրկեց Տիգրանին և պահանջեց Միհրդատը։ Տիգրան պատասխանեց թէ չի կրնար յանձնել և պատրաստ է պատերազմի։

Յետոյ, Տիգրան և Միհրդատ իրարու հետ

հաշտուեցան ու նորէն պատրաստուեցան պատերազմի։

Ասոր վրայ Լուկուլլոս մտաւ Հայաստան և պաշարեց Տիգրանակերտը, որ Տիգրանի երկրորդ մայրաքաղաքն էր։

Տիգրան երբ տեսաւ թշնամի բանակը որ իրենին չափ մեծ չէր, ըսաւ. «Ո՞վ են ասոնք, եթէ կռուելու եկած են՝ քիչ են, եթէ իբր դեսպան եկած են՝ շատ են»։ Եւ անհոգ կեցաւ։

Հռոմայեցւոց զօրքը քիչ էր, բայց կրթուած։ Լուկուլլոս յարձակմամբ առաւ քաղաքը. ներսի յոյները օգնեցին անոր։ Տիգրան հաղիւ կրցաւ փախչիլ և քաշուեցաւ դէպի Արտաշատ մայրաքաղաքը։ Լուկուլլոս ինկաւ անոր ետեւէն։ Սակայն ձմեռ էր և Լուկուլլոսի զօրքերը յոգնած։ Անոնք ապստամբեցան. չէին ուզեր շարունակել պատերազմը։ Լուկուլլոս, ամօթապարտ, դնաց Միջագետք և գրաւեց Մծբին քաղաքը։

ՊՈՄՊԷՈՍ ԵՒ ԱՐՏԱՇԱՏԻ ԴԱՇԻՆՔԸ.— Հռոմի կառավարութիւնը բարկանալով Լուկուլլոսին, զայն պաշտօնէ հանեց և անոր տեղ ղրկեց Պոմպէոս նշանաւոր զօրավարը։

Բայց Տիգրանի կացութիւնն ալ դէշցած էր։ Նախ՝ ան ծեր էր, 80 տարեկան։ Յետոյ՝ իր որ-



ՊՈՄՊԷՈՍ

դին՝ կրտսերն Տիգրան, իրմէ ապստամբած էր և կ՚ուզէր ինք ըլլալ թագաւոր։ Պարթեւաց թագաւորը իրեն թշնամի էր և դաշնակիցներն ու հպատակ ազգերը զինքը չէին սիրեր։ Իր միակ բարեկամը՝ Միհրդատն ալ, Պոմպէոսէն յաղթուած և անձնասպան եղած էր։

Տիգրան մինակ մնացած էր։

Ուստի, Տիգրան չուզեց շարունակել պատերազմը։ Երբ Պոմպէոս իր զաւակին առաջնորդութեամբ Հայաստան մտաւ, Տիգրան գնաց անոր հետ տեսնուելու։ Պոմպէոս մեծ պատիւներով ընդունեց Տիգրանը և հաշտուեցաւ անոր հետ։ Արտաշատի մէջ դաշինք մը գրուեցաւ հետեւեալ պայմաններով.—

1.— Տիգրան իրենց տէրերուն պիտի վերադարձնէր գրաւած բոլոր երկիրները և պիտի հրաժարէր Աբքայից Աբքայ ըլլալէ։ Ան միայն Հայաստանի թագաւոր պիտի մնար։

2.— Տիգրանէ յետոյ եկող թագաւորները Հռոմայեցւոց հաւանութեամբ դահ պիտի բարձրանային։

3.— Հայ թագաւորները Հռոմայեցւոց բարեկամ պիտի ըլլային և միասին պիտի պատերազմէին թշնամիներուն դէմ։

4.— Հայաստանի Ծոփք գաւառին վրայ կրտսերն Տիգրան պիտի թագաւորէր մինչև իր հօր մահը։

Բայց կրտսերն Տիգրան գոհ չմնաց ասկէ և Պոմպէոս զայն Հռոմ տարաւ ու սպաննեց։

Մեծն Տիգրան մեռաւ 85 տարեկան հասակին մէջ։ Երբ մեռաւ՝ ա՛լ կայսր չէր, բայց իր

յաջորդներուն ձգեց միացած, մեծ ու զօրաւոր Հայաստան մը։

Մեծն Տիգրան մեր պատմութեան ամենէն փառաւոր դէմքն է. ան մեր անունը ճանչցուց աշխարհին։

ՏԻԳՐԱՆԻ ԶՕՏՈՒՄԸ.— Տիգրանի ժամանակ Հայաստան դեռ շատ ետ մնացած երկիր մըն էր, բազդամամբ դրացիներուն։ Ուստի ան յոյն, հրեայ և ասորի բազմաթիւ գաղթականներ բերաւ իր երկրին մէջ որպէսզի անոնց միջոցաւ Հայաստանը յառաջդիմեցնէ։ Այդ գաղթականներուն ան տուաւ հող և շատ մը իրաւունքներ։ Տիգրանակերտ մայրաքաղաքը, զոր շինեց ինք՝ Մեծն Տիգրան, 25 տարուան մէջ մօտ 300,000 բնակիչ ունեցաւ, մեծ մասը օտար։

Տիգրան կը սիրէր հելլէն կրթութիւնը և յոյն նշանաւոր ուսուցիչներ բերել տուած էր իր զաւակաց կրթութեան համար։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Հռոմայեցիք ինչո՞ւ Լուկուլլոս զօրապետը դրկեցին։ Ի՞նչ բրաւ ան։ Ի՞նչպէս վերջացաւ Տիգրանակերտի պատերազմը։ Ինչո՞ւ Լուկուլլոս պատուոնէն հանուեցաւ եւ ո՞վ եկաւ անոր տեղը։ Ինչո՞ւ Տիգրան չուզեց պատերազմը շարունակել։ Որո՞նք են Արտաշատի դաշինքին պայմանները։

ԴԱՍ ԺԱ.

ԱՐՏԱՒԱԶԴ Բ.

Հայոց սիրելի թագաւորներէն մէկն է նաև Արտաւազդ Բ., որդին և յաջորդը Մեծն Տիգրանի։ Իր երեք եղբայրները մէյ մէկ դաւաճաններ եղած էին և իրենց հօրը ձեռքով պատժուած։ Բայց Արտաւազդ Բ. լաւ կրթութիւն մը ստացած էր, գիտէր յունարէն լեզուն և անով թատերգութիւններ կը գրէր։

Արտաւազդ Բ.ի դրամը

ԿՐԱՍՈՍ.— Իր թագաւորութենէն քիչ յետոյ նոր կռիւ մը բացուեցաւ Հռոմայեցւոց և Պարթեւաց միջև, որոնք աշխարհի ամենամեծ աղգերն էին այն ատեն։ Հռոմայեցւոց բանակին պետն էր Կրասոս անուն մէկը, որ կ'ուզէր

յաղթութիւններ տանիլ և հարստանալ կողոպուտով։

Կրասոս երբ Հայաստանի մօտերը հասաւ, Արտաւազդ իրեն խորհուրդ տուաւ որ Պարթեւներու դէմ պատերազմի երթալու համար անցնի Հայաստանի մէջէն։ Եթէ այդպէս ընէր Հռոմայեցւոց զօրապետը՝ Արտաւազդն ալ, իբրև դաշնակից, իրեն պիտի կրնար օգնել։

Սակայն Կրասոս խաբուեցաւ Արաբներէն և անոնց երկրէն դնաց ու շատ նեղութիւն քաշեց։ Հին Խառան քաղաքին քով Պարթեւները իրեն դիմացը ելան Սուրէն իշխանի առաջնորդութեամբ։ Սարսափելի կռիւ կը եղաւ և Կրասոս յաղթուեցաւ։ Սուրէն խաբէութեամբ բռնեց Կրասոսը և գլխատեց, իսկ իր բանակը ջարդուեցաւ, փճացաւ։

Այս կռուին ժամանակ Պարթեւաց Որոդ թագաւորը բանակ մը ալ ղրկած էր Հայաստան որպէսզի Արտաւազդ Կրասոսի օգնութեան չերթայ։

Արտաւազդ երկրորդ անգամ լուր ղրկեց Կրասոսին որ իր խորհուրդը մոռիկ ընէ, յայտնելով թէ ինք չի կրնար իրեն օգնել, բայց հրպարտ Կրասոսը պատասխանեց թէ՝ Պարթեւներուն յաղթելէն յետոյ պիտի դար ինքը

պատժելու։ Ասոր վրայ Արտաւազդ բարեկամացաւ Պարթեւներուն հետ և իր քոյրը տուաւ Որոդի որդին՝ Բակուրի։ Մեծ խնճոյքներ կատարեցին այս առթիւ։ Երկու թագաւորները ներկայ էին հարսնիքին։

Սուրէն իշխանը Հայաստան ղրկեց Կրասոսի գլուխը։ Զայն բերողները հայոց մայրաքաղաքը հասան ճիշդ հարսնիքին օրը, երբ հարսանեկան հանդէսներէն յետոյ ներկայացում կար։ Կրասոսի գլուխը բեմի վրայէն ցուցադրուեցաւ ներկաներուն որոնք ուրախութեան աղաղակներ արձակեցին։ Հռոմի մէջ երբ այս բանը իմացան, շատ զայրացան հայերուն։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ գիտէք Արտաւազդի եղբայրներուն եւ Արտաւազդի մասին։ Ո՞վ էր Կրասոս եւ ի՞նչ խորհուրդ տուաւ իրեն Արտաւազդ։ Ի՞նչ ըրաւ Կրասոս եւ ի՞նչպէս վերջացաւ իր կռիւը։

ԴԱՍ ԺԲ.

ԱՐՏԱՒԱԶԴ ԵՒ ԱՆՏՈՆԻՈՍ

Ցաղորդ տարի Կրասոսի տեղ եկաւ Անտոնիոս զօրավարը։ Ասիկա հայ բանակն ալ միասին առնելով յարձակեցաւ Պարթեւաց վրայ, բայց ինքն ալ յաղթուեցաւ։ Արտաւազդ իրմէ առաջ ձգեց պատերազմը և Հայաստան վերադարձաւ։ Հռոմէական զօրքին մնացորդը հազիւ փախաւ Հայաստան անօթի ու ծարաւ։

ԱՆՏՈՆԻՈՍ

Այդ զօրքերը հոն առատ ուտելիք գտան և այնքան կերան, որ շատերը հիւանդացան ու մեռան։

Անտոնիոս դարձաւ Աղեքսանդրիա Կղեոպատրա թագուհիին քով ու լուր հանեց թէ Արտաւազդի պատճառաւ յաղթուեցաւ։ Ցետոյ, փորձեց խաբէութեամբ բռնել Արտաւազդը, բայց չյաջողեցաւ։ Անտոնիոս նորէն մտաւ Հայաստան

և այս անգամ յաջողեցաւ խաբէութեամբ բռնել Հայոց արքան։ Զայն ոսկի և արծաթ շղթաներով կապելով ընտանիքին հետ բերաւ Աղեքսանդրիա, Հայաստանը կողոպտելէ յետոյ։

Հայերը Արտաւազդի տեղ թագաւոր դրին իր որդին Արտաշէսը և կոտորեցին ու փախցուցին իրենց երկիր մնացած Հռոմայեցւոց զօրքը։

Անտոնիոս, Աղեքսանդրիոյ մէջ, օր մը մեծ հանդէս մը ըրաւ. Կղեոպատրա թագուհին ոսկեղէն աթոռի մը վրայ նստեցուց և ստիպեց Հայոց Արքայից Արքան որ երթայ անոր երկրպագութիւն ընէ՝ և ըսէ. «Թագուհիներու թագուհի»։ Արտաւազդ չըրաւ ատիկա և ատոր համար սպաննուեցաւ վատաբար։

Անտոնիոս, մեծ հակառակորդ մը ունէր, անունը Ոկտաւիանոս-Օգոստոս։ Ասիկա պատերազմ բացաւ Անտոնիոսի դէմ։ Անտոնիոս սպաննուեցաւ, իսկ Կղեոպատրա գերի չիյնալու համար անձնասպան եղաւ։

Անտոնիոս և Կղեոպատրա կ՚ուզէին Աղեքսանդրիան ընել Հռոմայեցւոց մայրաքաղաքը։ Ասոր համար էր որ անոնք պատժուեցան Ոկտաւիանոսէն։ Արտաւազդ թագաւորեց Ք.Ա.56-34ին։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Կրասոսի տեղ ո՞վ եկաւ Պարթեւաց դէմ եւ ի՞նչ բրաւ։ Ի՞նչպէս վերջացաւ Անտոնիոսի արշաւանքը։ Անտոնիոս ո՞ւր գնաց եւ ի՞նչ լուր հանեց։ Անտոնիոս ի՞նչպէս բռնեց Արտաւազդը եւ ի՞նչ բրաւ։ Ի՞նչպէս վերջացաւ Անտոնիոսի պատմութիւնը։ Ինչո՞ւ Օգոստոս սպաննեց զինքը։

ԴԱՍ ԺԳ.

ԱՐՏԱՇԷՍԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ ԵՒ ՕՏԱՐ ԹԱԳԱՒՈՐՆԵՐ

Օգոստոս Արտաւազդ Բ.ի զաւակները իրեն հետ Հռոմ տարաւ և հռոմէական կրթութիւն տուաւ անոնց։ Իր նպատակն էր զանոնք թագաւորցնելով Հայոց վրայ՝ Հայաստանը իրեն հետ ունենալ։

Ակէ զատ, Օգոստոս լաւ վերաբերում ունեցաւ նաև հայ նախարարներու հանդէպ, որոնցմէ շատերը հռոմէասէր դարձան։ Ուրիշ նախարարներ սակայն շարունակեցին պարթեւասէր մնալ և այս կերպով Հայոց մէջ առաջ եկան երկու կուսակցութիւններ։ Պարթեւասէրները շատ էին, իսկ Հռոմէասէրները՝ քիչ։

Հայ ժողովուրդը, այսպէս. երկուքի բաժնուելով աւելի տկարացաւ։ Հռոմայեցւոց ուզածն ալ սա էր արդէն, որովհետև իրենց գործին չէր դար որ Հայ ժողովուրդը միացած և զօրաւոր ըլլայ։ Իրենց ուղղութիւնն էր. «Բաժնէ որ տիրես»։ Անոնք բոլոր ազգերու մէջ ալ այսպէս բաժանում կը ձգէին որ դիւրութեամբ կարենան տիրապետել անոնց երկրին։

Արտաշէսեան հարստութեան վերջին թագաւորը եղաւ Տիգրան Զ., Արտաւազդ Բ.ի վերջին զաւակը։ Ան կարճ ատեն մը թագաւորեց որովհետև Օգոստոս զայն Հռոմ կանչեց և ա՛լ չձգեց որ վերադառնայ և ոչ ալ ուրիշ հայ թագաւոր մը ղրկեց։

Այսպէս վերջացաւ Արտաշէսեան Հարստութիւնը որ տեւեց 204 տարի, Քրիստոսէ առաջ 190էն մինչև Քրիստոսէ վերջ 14 թուականը։

Անկէ յետոյ Հայաստան ատեն մը ալ կռուախնձոր եղաւ Հռոմայեցւոց, Պարթեւաց և Վրացիներու միջև որոնք աշխատեցան իրենցմէ թագաւորներ դնել մեր երկրին վրայ։ Բայց այս օտար թագաւորները չկրցան երկար մնալ և գործ մը տեսնել ու կռիւներով աւելի տկարացուցին մեր երկիրը։

Հայաստան այնպիսի երկիր մըն է որուն տիրապետողը կրնայ տէր ըլլալ շրջակայ երկիրներուն ալ։ Ասոր համար էր որ Հռոմայեցիք ու Պարթեւները կ'աշխատէին իրարու ձեռքէն խլել զայն, օգնութեամբ հայ նախարարներուն, ո-

ընք կամ պարթեւասէր էին, կամ հռոմէասէր։

Հռոմայեցիք իրենց գրաւած երկիրներու բնակչութեան հետ միեւնոյն կերպով չէին վարուեր։ Ոմանք կը ղրկէին իրենց անկախութենէն, ուրիշները կը պաշտպանէին և իրենց դաշնակից կը դարձնէին, ոմանք ալ իրենց անուանական գերիշխանութեան տակ կը պահէին։ Բայց իրենց բուն նպատակն էր ասիացիները տկարացնել և անոնց երկիրներուն տիրապետել։ Այս պատճառաւ ալ Ասիոյ ժողովուրդները չէին սիրեր Հռոմայեցիք որոնց ղրկած կառավարիչներն ու զօրապետները կաշառակեր և անարդար մարդիկ էին։

Հռոմայեցիք, Օգոստոսէն յետոյ, քանի մը անգամ փորձեցին վերջացնել Հայոց անկախութիւնը և երկիրը հռոմէական նահանգ մը դարձնել, բայց Պարսկաստան միշտ հակառակեցաւ։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Օգոստոս ի՞նչպէս վարուեցաւ Հայոց հետ եւ ի՞նչ օգուտ ունեցաւ։ Ի՞նչ էր Հռոմայեցւոց ուղղութիւնը։ Ի՞նչպէս եւ ե՞րբ վերջացաւ Արտաշէսեան հարստութիւնը։ Ի՞նչ եղաւ անկէ յետոյ Հայաստանը։ Հռոմայեցիք ի՞նչպէս կը վարուէին իրենց գրաւած երկիրներուն հետ։

ՄԱՍ Դ.

ԴԱՍ ԺԴ.

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ՏՐԴԱՏ Ա.

Քրիստոսէ յետոյ 51 թուականին Պարթեւաց թագաւորն էր քաջ և խելացի Վաղարշ Արշակունին։ Անիկա Մարաստանի վրայ թագաւոր նշանակեց իր մեծ եղբայրը Բակուր, իսկ Հայաստանի վրայ իր փոքր եղբայրը՝ Տրդատ։ Ինք կը մնար Արքայից Արքայ և ինք միայն կրնար դրամ կտրել։ Ասոր համար է որ մեր Արշակունի թագաւորներէն մեզի բնաւ դրամ հասած չէ։

Բայց այդ ատեն Հայաստանի վրայ կը թագաւորէր Հռադամիզդ, որ Վրաց թագաւորին որդին էր և Հռոմայեցւոց բարեկամը։ Ասիկա շատ անգութ մարդ մը ըլլալուն պատճառաւ, Հայերը միացան Տրդատին և զայն փախցուցին։

ընք կամ պարթեւասէր էին, կամ հռոմէասէր։

Հռոմայեցիք իրենց գրաւած երկիրներու բնակչութեան հետ միեւնոյն կերպով չէին վարուեր։ Ոմանք կը զրկէին իրենց անկախութենէն, ուրիշները կը պաշտպանէին և իրենց դաշնակից կը դարձնէին, ոմանք ալ իրենց անուանական գերիշխանութեան տակ կը պահէին։ Բայց իրենց բուն նպատակն էր ասիացիները տկարացնել և անոնց երկիրներուն տիրապետել։ Այս պատճառաւ ալ Ասիոյ ժողովուրդները չէին սիրեր Հռոմայեցիք որոնց զրկած կառավարիչներն ու զօրապետները կաշառակեր և անարդար մարդիկ էին։

Հռոմայեցիք, Օգոստոսէն յետոյ, քանի մը անգամ փորձեցին վերջացնել Հայոց անկախութիւնը և երկիրը հռոմէական նահանգ մը դարձնել, բայց Պարսկաստան միշտ հակառակեցաւ։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Օգոստոս ի՞նչպէս վարուեցաւ Հայոց հետ եւ ի՞նչ օգուտ ունեցաւ։ Ի՞նչ էր Հռոմայեցւոց ուղղութիւնը։ Ի՞նչպէս եւ ե՞րբ վերջացաւ Արտաշէսեան հարստութիւնը։ Ի՞նչ եղաւ անկէ յետոյ Հայաստանը։ Հռոմայեցիք ի՞նչպէս կը վարուէին իրենց գրաւած երկիրներուն հետ։

ՄԱՍ Դ.

ԴԱՍ ԺԴ.

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ՏՐԴԱՏ Ա.

Քրիստոսէ յետոյ 51 թուականին Պարթեւաց թագաւորն էր քաջ և խելացի Վաղարշ Արշակունին։ Անիկա Մարաստանի վրայ թագաւոր նշանակեց իր մեծ եղբայրը Բակուր, իսկ Հայաստանի վրայ իր փոքր եղբայրը՝ Տրդատ։ Ինք կը ճնար Արքայից Արքայ և ինք միայն կրնար դրամ կտրել։ Ասոր համար է որ մեր Արշակունի թագաւորներէն մեզի բնաւ դրամ հասած չէ։

Բայց այդ ատեն Հայաստանի վրայ կը թագաւորէր Հռադամիզդ, որ Վրաց թագաւորին որդին էր և Հռոմայեցւոց բարեկամը։ Ասիկա շատ անգութ մարդ մը ըլլալուն պատճառաւ, Հայերը միացան Տրդատին և զայն փախցուցին։

ԿՈՐԲՈՒԼՈՆ ԵՒ ԱՐՏԱՇԱՏԻ ԱՒԵՐՈՒՄԸ.— Հռոմայեցիք երբ այս լուրը առին Հայաստան ղրկեցին նշանաւոր Կորբուլոն զօրավարը։ Ասիկա մեծ զժուարութեամբ կրցաւ հասնիլ մինչև Արտաշատ մայրաքաղաքը։ Տրդատ ըստիպուեցաւ ետ քաշուիլ՝ իր զօրքը քիչ ըլլալուն պատճառաւ։ Արտաշատի բնակիչները քաղաքը յանձնեցին Կորբուլոնին պայմանաւ որ ՁԵԱՍ մը չի տայ. բայց սա, ՃՄԵՌԸ հոն ՄՆԱԼԷ յետոյ, գարնան քաղաքը կործանեց ու այնպէս քաշուեցաւ։ Տիգրանակերտը եւս գրաւելէ յետոյ Կորբուլոն Հայաստանի վրայ թագաւոր դրաւ Տիգրան անուն։

ՏՐԴԱՏ Ա.

նով մէկը։

Սակայն շուտով Տրդատ նոր զօրքով Հայաստան մտաւ։ Միւս կողմէ Վաղարշն ալ պատերազմ բացաւ Հռոմայեցւոց դէմ։ Այս անգամ Պարթեւաց դէմ եկաւ Պետոս զօրավարը որ չարաչար յաղթուեցաւ։ Տրդատ գրաւեց Հայաստանը։



ԿՈՐԲՈՒԼՈՆ

ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ ՊԱՐԹԵՒԱՑ ԵՒ ՀՌՈՄԱՑԵՑԻՈՑ ՄԻՋԵՒ.— Հռոմայեցիք ստիպուեցան նորէն Կորբուլոնը ղրկել Հայոց և Պարթեւաց դէմ։ բայց այս նշանաւոր զօրավարը, հակառակ որ շատ զօրք ունէր իր ձեռքին տակ, աւելի խելացութիւն սեպեց գործը համաձայնութեամբ վերջացնել։ Առաջարկեց որ Տրդատը Հռոմ երթայ և Ներոն Կայսրէն ընդունի իր թագը։ Տրդատ յանձն առաւ, պայմանաւ որ (1) Զրադաշտական կրօնի համեմատ ցամաքով երթայ, և ոչ

թէ ծովով, որովհետեւ Պարսից կրօնքը կ'արգիլէր ջուրը աղտոտել. (2) ճամբան մեծ պատիւներ ըլլան իրեն. (3) բոլոր ծախսերը Հռոմայեցիք ընեն։

ՆԵՐՈՆ ԿԱՅՍՐԸ

ՏՐԴԱՏ ՀՌՈՄԻ ՄԷՋ.— Համաձայնութիւն գոյանալէ յետոյ, Տրդատ իր կնոջ, զաւակներուն, հայ ու պարթեւ իշխաններու և 300 զինուորներու հետ ճամբայ ելաւ։

Ներոն մեծ պատիւներով ընդունեց հիւրերը։ Թագադրութեան հանդէսն ալ շատ փառաւոր եղաւ և կայսրը իր ձեռքով Տրդատի գլուխը դրաւ հայկական թագը։

Հանդէսին ներկայ եղող ամբոխը ուրախութեան աղաղակներ կ'արձակէր։ Ի պատիւ Տրդատի Պոմպէոսի Թատրոնին մէջ ներկայացում տրուեցաւ։ Ներկաները զարդարուած էին ոսկիով և ծիրանիով և այդ օրը կոչուեցաւ «Ոսկի Օր»։ Ներոն իր ձեռքով դոցեց Յանոսի տաճարին

դուռները ի նշան խաղաղութեան ծովի և ցամաքի վրայ։

Հանդէսները վերջանալէն յետոյ Տրդատ վերադարձաւ նոյն պատիւներով։ Ներոն անոր տուաւ շատ մը վարպետներ և դրամ որ վերանորոգէ Արտաշատը։

Այս կերպով թէև Հայաստանը Հռոմէական դերիշխանութեան տակ կը մնայր, բայց ատիկա անուանական էր։ Հռոմի և Պարթեւներու միջև, այս կերպով, խաղաղութիւն հաստատուեցաւ։ Այս խաղաղութիւնը տեւեց մօտ յիսուն տարի և Հայաստանի մէջ ծաղկեցան արհեստներն ու վաճառականութիւնը։

Տրդատ թագաւորեց 66—75։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Վաղարշ Արշակունի թագաւորը ի՞նչ նոր կարգադրութիւն մը բրաւ։ Այն ատեն ո՞վ էր Հայաստանի թագաւորը եւ ի՞նչ եղաւ։ Ի՞նչ բրաւ Խորոսրոն զօրավարը։ Ի՞նչ բրին Վաղարշն ու Տրդատը։

Ի՞նչպէս վերջացաւ Պարսիս-հռոմէական պատերազմը։ Ո՞ւր գնաց Տրդատ եւ ի՞նչ եղաւ անկէ յետոյ Հայաստանը։

ԴԱՍ ԺԵ.

ՀԱՅԱՍՏԱՆ ՏՐԴԱՏ Ա.ԷՆ ՑԵՏՈՅ

ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ.— Տրդատէն անմիջապէս յետոյ կ'երեւի թէ Հայոց թագաւոր եղաւ Սանատրուկ, որուն յաջորդեց իր որդին Աշխադար։ Սա չկրցաւ սիրելի ըլլալ Հռոմայեցւոց և ոչ ալ Պարթեւաց, ուստի, Խոսրով Բ. երբ Պարսից թագաւոր եղաւ, Աշխադարը վար առաւ և անոր տեղ թագաւոր դրաւ Պարթամասիր, առանց Հռոմի հաւանութեան։

Այս պատճառաւ Տրայիանոս կայսրը պատերազմ բացաւ Հայոց և Պարթեւաց դէմ, և վատաբար սպաննեց Պարթամասիրը և Հայաստանը ըրաւ հռոմէական նահանգ մը։

Տրայիանոս կայսրը Հայաստանէն անցաւ Միջագետք և Ասորիք ղորս նոյնպէս հռոմէական նահանգի վերածեց։ Ցետոյ մտաւ Պարթեւաց երկիրը, գրաւեց մայրաքաղաքը, թալանեց Արշակունեաց ոսկեձոյլ գահը և Խոսրով Բ.ի դաւաճան որդին թագաւոր ըրաւ ու վերադարձաւ։

Տրայիանոսի այս ընթացքը պատճառ եղաւ

սակայն որ բոլոր Պարթեւները միանան և նոր պատերազմներու ձեռնարկեն։ Հայաստանն ալ մասնակցեցաւ այս ապստամբութեան։

Տրայիանոսի յաջորդ Ադրիանոս կայսրը խաղաղութեան մէջ ապրեցաւ Պարթեւաց և Հայոց հետ և Հայաստանի թագաւոր եղաւ Վաղարշ։

Բայց Անտոնիոս Պիոս կայսրը Վաղարշը գահէն զրկեց և տեղը դրաւ Սոյեմոս որ միայն մօր կողմէ Արշակունի էր և ջերմ հռոմայեսէր։ Կայսեր այս արարքը և ոսկեղէն գահը վերադարձնելու խնդրանքին մերժուիլը պատճառ եղաւ որ նորէն բորբոքի պատերազմը։ Հռոմէական բանակը ջարդ ու փշուր եղաւ և հրամանատարն ալ ամօթէն անձնասպան եղաւ։

Հռոմ նոր և մեծ բանակ մը զրկեց որ յաղթական հասաւ մինչև Տիզբոն ուր արքունի պալատը հողին հաւասար ըրաւ։ Նոյն ատեն երկրորդ բանակ մը Հայոց վրայ գնաց և Հայաստան նորէն Հռոմին ենթարկուեցաւ և Սոյեմոս կրկին գահ բարձրացաւ։

Սոյեմոսէն վերջ Հայոց թագաւոր եղաւ Խոսրով Ա. որ կրցաւ սիրելի ըլլալ Պարթեւներուն և Հռոմայեցիներուն։

Կարակալլա կայսրը նոր պատերազմի մը

ձեռնարկելով Հայոց և Պարթեւաց դէմ, խաբէութեամբ իր քով հրաւիրեց Խոսրովը և կնոջ ու որդիներուն հետ չղթայի զարկաւ, տիրելու համար Հայաստանի։

Ասոր վրայ Հայաստանի մէջ մեծ ապստամբութիւն մը ծագեցաւ Արքայորդի Տրդատ Բ. ի առաջնորդութեամբ որ թագաւոր հռչակուեցաւ և յաղթեց իր վրայ եկող հռոմէական բանակին։

Բայց երբ Կարակալլա կայսրը ինք անձամբ եկաւ Հայաստան, Տրդատ Պարթեւաց քով գնաց։ Սակայն Արքայից Արքան ստիպուեցաւ Տրդատը կայսեր յանձնել։

Երբ Կարակալլա իր անգթութեան պատճառաւ սպաննուեցաւ իր զինուորներէն, իրեն յաջորդը՝ Մակրինոս՝ ծանր պարտութիւն մը կրեց Պարթեւներէն և ստիպուեցաւ ետ դարձնել Տրդատ Բ.ը որուն արքայական թագ տուաւ։ Վերադարձուց նաև անոր եղբայրներն ու քոյրերը և Հայաստանէն առնուած աւարը։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Տրդատէն յետոյ որո՞նք եղան Հայաստանի թագաւոր։ Ի՞նչ բրաւ Տրդատեան կայսրը։ Ի՞նչ բրին Ադրիանոս եւ Անտոնինոս Պիոս կայսրերը։ Ի՞նչ բրաւ Կարակալլա կայսրը եւ հետեւանքը ի՞նչ եղաւ։ Տրդատ Բ. ի՞նչպէս գահ բարձրացաւ։

ԴԱՍ ԺԶ.

ՍԱՍԱՆԵԱՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

ԱՐՏԱՇԻՐ ՍԱՍԱՆԵԱՆ.— 226 թուականին մեծ փոփոխութիւն մը տեղի ունեցաւ Պարթեւաց երկրին մէջ։ Բո՛ւն Պարսկաստանի իշխաններէն մէկը, Սասանի թոռը՝ Արտաշիր, զօրանալով, իր շուրջը հաւաքեց Պարթև վերջին թագաւոր Արտաւան Ե.է զրժդոհ եղողները, երբ մեծ պատերազմներու մէջ յաղթեց Արտաւանին, գայն ըսպաննեց ու գահ բարձրացաւ։ Պարթեւական հարստութիւնը, այս կերպով, վերջացաւ և հիմնուեցաւ Սասանեան հարստութիւնը։ Պարթեւները երկար ատեն Հռոմայեցւոց և Ցունաց հետ չփուելով աւելի քաղաքակրթուած էին, մինչ Սասանեանները աւելի ասիական էին և կ'ուզէին ոչնչացնել ինչ որ յունական և հռոմէական էր։

Արտաշիրի դրամը

ԽՈՍՐՈՎ Բ.— Այս ատեններ Հայոց թագաւորն էր Խոսրով Բ. որ Արտաւան Ե.ի մօտիկ

ազգականն էր։ Բնական է որ Արտաշիր լաւ աչքով չէր նայեր Խոսրով Բ.ի վրայ։ Եւ իրաւալ, Հայոց թագաւորը իր շուրջը հաւաքելով շատ մը Պարթև Արշակունիներ, մեծամեծ պատերազմներ մղեց Արտաշիրի դէմ և յաղթեց ալ, բայց չկրցաւ կործանել Սասանեան հարստութիւնը։

Այս կռիւները երկար տեւեցին։ Արտաշիրի յաջորդը, Շապուհ Ա., դիմեց խարդախութեան։ Անակ Պահլաւունի մեծ իշխանին մեծամեծ խոստումներ ըրաւ՝ եթէ սա կարենար զինքը աղատել Խոսրովէն։ Անակ ընտանիքով փախաւ եկաւ Խոսրովի քով և խարդախութեամբ զայն սպաննեց։ Ասոր իբր վրէժ Հայերը սուրէ անցուցին Անակի ընտանիքը որմէ աղատեցաւ Գրիգոր անունով տղայ մը, որ Կեսարիա տարուեցաւ։ Իսկ Շապուհ տիրելով Հայաստանի հրամայեց ոչընչացնել Խոսրով Բ.ի ընտանիքը։ Այս կոտորածէն աղատեցան փոքրիկն Տրդատ, զոր Արտաւազդ Մամիկոնեան Հռոմայեցւոց կողմ փախցուց, և անոր Խոսրովիդուխտ քոյրը, զոր Օտա Ամատունի իշխանը իր քով տարաւ ու պահեց։

Անկէ յետոյ Հայաստան 25 տարիի չափ Պարսկաստանի մէկ նահանգը եղաւ և կառավարուեցաւ պարսիկ սատրապներով։ Ի վերջոյ, կռիւները նորէն վերսկան, մինչև որ Հռոմայեցւոց Դիոկղետիանոս մեծ կայսրը ստիպեց Պարսից Վռամ Բ. արքան որ Հայաստանն ու Միջագետքը իրեն թողու։

Տրդատ Հռոմայեցւոց քով մեծնալով իր քաջութիւններովը մեծ անուն մը վաստկած էր։ Կը պատմեն թէ անգամ մը կառքով մրցում կատարած ատեն իր հակառակորդը երբ զինքը խարդախութեամբ վար ձգեց, Տրդատ անոր կառքին եռեւէն վազեց և այնպէս ուժով մը բռնեց որ ձիերը չկրցան շարժիլ։ Տրդատ զինուոր եղաւ հռոմէական բանակին մէջ։ Անգամ մը զինուորները ապստամբեցան իրենց պետին դէմ և կ'ուզէին սպաննել զայն։ Տրդատ մինակը կեցաւ իր պետին դրանը առջև ու չձգեց որ մէկը մօտենայ անոր։

Ուրիշ անգամ մըն ալ Տրդատ Հռոմի կայսեր փոխարէն գօտեմարտեցաւ թշնամի ցեղին թագաւորին դէմ և յաղթեց անոր։ Այսպէս կայսրը շատ գոհ մնաց և ուզեց որ Տրդատը նորէն իր հօր գահը բարձրանայ։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— 226 թուականին ի՞նչ փոփոխութիւն կատարուեցաւ Պարսկաստանի մէջ եւ ի՞նչպէս։ Այն ատենները ո՞վ էր Հայոց թագաւորը եւ ի՞նչ բրաւ։ Ո՞վ էր Անակ Պահլաւունին եւ ի՞նչ բրաւ։ Անկէ յետոյ ի՞նչ եղաւ Հայաստանը։ Ի՞նչեր կը պատմեն Տրդատի մասին։

ԴԱՍ ԺԷ.

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ

ՏՐԴԱՏ Գ. ԵՒ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Պարսից և Հռոմայեցւոց համաձայնութենէն վերջ Տրդատ թագաւոր պսակուեցաւ և Հայաստան եկաւ։ Հայ ազգը ջինքը սիրով ընդունեց և Պարսից Վռամ թագաւորն ալ ճանչցաւ անոր թագաւորութիւնը։ Բայց երբ Վռամին յաջորդեց Ներսեհ, կռիւները վերսկսան, որովհետև Ներսեհն ալ իր նախորդներուն պէս կ'ուզէր Հռոմայեցիք Ասիայէն դուրս վռնտել։ Տիրելէ յետոյ Հայաստանի, Ներսեհ յարձակեցաւ Հռոմայեցւոց վրայ և անոնց յաղթեց։ Հռոմայեցիք նոր բանակ մը ալ ղրկեցին, բայց այս անգամ Ներսեհ հաղիւ կրցաւ փախչիլ և ազատիլ։

Մծբինի մէջ կնքուեցաւ հաշտութեան դաշինք մը որ 40 տարի խաղաղութիւն տուաւ աշխարհի։ Այս նշանաւոր դաշինքով Հայաստան կը մնար դաշնակից Հռոմի և իր սահմանները կ'ընդարձակուէին։

Ահա այս խաղաղութեան տարիներուն էր որ պատահեցաւ մեր պատմութեան ամենէն նշանաւոր դէպքերէն մէկը.— Հայ ազգը ընդունեց Քրիստոնէութիւնը։

Այս մեծ դէպքը տեղի ունեցաւ 305 թուականին։ Գաղղիա մեզմէ 191 տարի վերջ ընդունեց Քրիստոնէութիւնը։ Անգլիա՝ 300, իսկ Գերմանիա՝ 500 տարի վերջ։

Քրիստոնէութիւնը մեր մէջ տարածողներն եղան Մեծն Տրդատ և Ս. Գրիգոր Լուսաւորիչ։

Տրդատէն և Լուսաւորչէն առաջ ալ Հայոց մէջ քրիստոնեաներ կային։ Քրիստոսի աշակերտներէն Թադէոս և Բարթողէմէոս քարոզչութեան եկած էին Հայաստան և հոն նահատակուած էին։ Մեծն Տրդատի օրով ան պաշտօնական կրօն դարձաւ։

Հայաստանի Լուսաւորիչը եղաւ Անակի որդին որ, ինչպէս ըսինք, Կեսարիա տարուած, հոն իբր քրիստոնեայ մեծցած և մկրտուած էր Գրիգոր անուամբ։ Ան հոն ամուսնացած ու Վրթանէս և Արիստակէս անունով երկու զաւակներ ունեցած էր։ Յետոյ բաժնուելով իր ընտանիքէն Տրդատի քով ծառայութեան մտած էր և Հայաստան եկած։ Տրդատ իմանալով Գրիգորի ով ըլլալը, զայն բանտարկած էր։ Այս տեսներ կարեւոր դէպք մը պատահեցաւ Հայաստանի մէջ։ Հռոմէն Հայաստան փախած էր աղջիկներու խումբ մը, 37

հոգի։ Այս խումբին պետն էր Գայիանէ, բայց մէջերնին ամենէն գեղեցիկն էր Հռիփսիմէ։ Ասոնք քրիստոնեայ էին և փախած էին Կայսեր ձեռքէն, որ կ'ուզէր Հռիփսիմէն թագուհի առնել։ Կայսրը երբ իմացաւ որ այս կոյսերը Հայաստան փախեր են, գրեց Տրդատին որ փնտռէ զանոնք և Հռիփսիմէն իրեն ղրկէ։ Երկար փընտրռտուքէ յետոյ վերջապէս կոյսերը գտնուեցան։ Բայց Տրդատ ուզեց որ Հռիփսիմէ իրեն թագուհի ըլլայ։ Հռիփսիմէ մերժեց, որովհետև Տրդատն ալ Կայսեր պէս կռապաշտ էր։

Ասոր վրայ Տրդատ զայրացաւ և նահատակեց բոլորը։ Կոյսերու նահատակութենէն յետոյ, Տրդատ հիւանդացաւ։ Խոսրովիդուխտի երազներուն վրայ Գրիգորը բանտէն հանեցին և ան բժշկեց Տրդատը, որ ընդունեց Քրիստոնէութիւնը։ Քրիստոնեայ դարձան նաև իր կինն ու քոյրը և նախարարներէն շատերը։ Յետոյ Թագաւորն ու Գրիգոր շրջեցան Հայաստան և կործանեցին մեհեանները, շինեցին եկեղեցիներ։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Տրդատ ի՞նչպէս Հայաստանի թագաւոր եղաւ։ Ածքինի դաշինքով ի՞նչ կ'ըլլար Հայաստանը։ Հայերը ե՞րբ քրիստոնեայ դարձան, որո՞ւ ձեռքով, ի՞նչպէս։

ԴԱՍ ԺԸ.

ՀԱՅԱՍՏԱՆ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵԼԷՆ ՅԵՏՈՅ

Հեթանոսական կրօնը անմիջապէս չվերջացաւ։ Թուրմերը ապստամբեցան, յաղթուեցան և փճացան։ Որով նոր կրօնքը զէնքի ուժով տարածուեցաւ մեր մէջ։

Նորադարձներուն հոգեւոր տեսուչ պէտք էր։ Գրիգոր 16 նախարարներու հետ Կեսարիա գնաց, եպիսկոպոս ձեռնադրուեցաւ ու վերադարձին մկրտեց թագաւորը, անոր ընտանիքը, նախարարները և բիւրաւոր մարդիկ։ Շինեց եկեղեցիներ, օրինակ Էջմիածինը և Ս. Կարապետը։

Յետոյ Գրիգոր բացաւ դպրոցներ՝ նոր կրօնքը ուսուցանելու համար։ Ուսուցիչները յոյն էին և ասորի, որոնք այդ լեզուներով կ'ուսուցանէին, քանի որ հայերէն գիր ու գիրք չկար։ Ամէն դասակարգի աղաք կ'ընդունուէին այդ դպրոցներուն մէջ, մանաւանդ քուրմերու տղաքը։ Ասոնցմէ 12 ը եպիսկոպոս ձեռնադրուեցան։

Լուսաւորիչ եկեղեցիներու նիւթականին ալ

հոգ տարաւ։ Մեհեաններու կալուածները եկեղեցիին ու եկեղեցականներուն անցան։ Լուսաւորիչ ինքը, իբրև աղնուական, մեծամեծ կալուածներ ունէր։ Այնպէս որ, ժամանակ մը յետոյ, նախարարներէն ոչ մէկը կրնար հաւասարիլ կաթողիկոսին՝ հարստութեան և ուժի կողմէ։ Այս կերպով կաթողիկոսները շատ ազդեցիկ դարձան։

312 թուականին Հայերը այնքան ջերմ քրիստոնեայ էին որ երբ Մաքսիմիանոս կայսրը ուզեց զէնքով հին կրօնքը վերահաստատել Հայաստանի մէջ, Հայերը զէնքի դիմեցին և յաղթեցին կայսեր։ Բայց Կոստանդիանոս կայսրը 312 ին քրիստոնէութիւնը ազատ կրօնք հռչակեց և 323 ին ինքն ալ քրիստոնէութիւնը ընդունեց։ Այսպէս, Հայաստան և Հռոմ կրօնքով իրարու միացան և Պարսկաստան ա՛լ աւելի թշնամացաւ Հայաստանի։

Այս ատեններ Պարսից թագաւորն էր Շապուհ Բ. որ 70 տարի թագաւորեց։ Ան բնաւ գոհ չէր որ Հայերը և Հռոմայեցիք կրօնքով իրարու միացան և դաշնակից ալ եղան։ Բայց բան մը չէր կրնար ընել, որովհետև Հռոմի հետ կնքած դաշինքին ժամանակը չէր լրացած։ Ուստի աշխատեցաւ որ հայ նախարարները ապստամբեցնէ



Ս. Էջմիածին

Տրդատի դէմ և ուրիշ թշնամիներ ստեղծէ։ Սակայն Տրդատ բոլորին ալ արժանի դասը տուաւ։

Հայաստան Տրդատի ժամանակ խաղաղութիւն վայելելով այնքան զօրացած էր որ դրացի փոքր երկիրները՝ Վրաստան և Աղուանիստան՝ իր ազդեցութեան տակ ինկան։ Քրիստոնէութիւնը Հայաստանէն մտաւ Վրաստան և երկու ազգերը իրարու հետ բարեկամացուց։

Մեծն Տրդատ մեռաւ 329 թուին, թողլով մեծ ու զօրաւոր Հայաստան մը։ Իրմէ առաջ վախճանած էր Լուսաւորիչը։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Տրդատի թագաւորութենէն յետոյ ի՞նչեր պատահեցան։ Քրիստոնէութիւնը ե՞րբ եւ ի՞նչպէս տարածուեցաւ մեր մէջ։ Ո՞վ եղաւ Հայոց առաջին եպիսկոպոսը։ Ի՞նչ գործեր տեսաւ Լուսաւորիչը։ Ո՞վ էր այն ատեն Պարսից թագաւորը եւ ինչե՛ր բրաւ։ Ի՞նչպէս էր Հայաստանը Տրդատի ժամանակ։

ԴԱՍ ԺԹ.

ՏՐԴԱՏ Գ.Ի ՅԱՋՈՐԴՆԵՐԸ

Տրդատ Գ.ի և Լուսաւորչի մահէն ետքը Հայաստանի պայմանները փոխուեցան։ Նախ, Պարսիկները շատ դժգոհ էին որ Հայեր կրօնքով իրենցմէ բաժնուեցան և յունասէր կուսակցութիւնը յաղթանակեց։ Յետոյ, նախարարները այնքան զօրացեր էին որ ա՛լ չէին հնազանդեր Թագաւորին։ Ասոնք պարսկասէրներն էին և շատ անգամ Շապուհի դրդումով կը գործէին։ Այս կուսակցութիւններէն զատ հիմա կար նաև հոգեւորականութիւնը, որ Թագաւորին չափ ուժով էր։

Տրդատէն յետոյ պայքար մը սկսաւ Թագաւորին և պարսկասէր նախարարներուն միջև։ Հոգեւորականութիւնն ու յունասէրները շատ անգամ Թագաւորին կողմն էին։

ԽՈՍՐՈՎ Դ.— Տրդատին յաջորդեց Խոսրով Կոտակ։ Խոսրով կը ջանար իր հօր գործը շարունակել։ Ան իր ազդեցութիւնը տարածեց նաև Վրաց և Աղուանից երկիրներուն վրայ և Վրթանէսի որդին Գրիգորիսը անոնց Վրայ եպիսկոպոս նշանակեց։ Մամիկոնեան նախարարներու հետ ալ բարեկամ էր և Վաչէ Մամիկոնեանը կարգեց սպարապետ։

Շուտով նախարարներու մէջ կռիւ ծագեցաւ, մանաւանդ Մանաւազեանց և Որդունեաց նախարարներուն միջև, որոնք Թագաւորն ալ անպատուեցին։ Վաչէ սպարապետը, Թագաւորին հրամանաւ ջարդեց ու վերջացուց այս երկու տոհմերը։

Այս առեններ Շապուհ գրգռեց Մազքթաց Սանեսան Թագաւորը որ Հայաստան արշաւէ։ Բայց Վաչէ անոր յաղթեց և Վահան Ամատունի անոր գլուխը կարեց։

Խոսրով իր գահը փոխադրեց Դուին և շինարարութիւններ ըրաւ։

Երբ քառասնամեայ դաշինքը վերջացաւ, Շապուհ Հայաստանի սահմաններուն մօտեցաւ և ապստամբեցուց Բզնունեաց և Աղձնեաց իշխանները, որոնք Վաչէէն սպաննուեցան։ Յետոյ, Շապուհ ինք եկաւ Հայաստան, բայց պարտուեցաւ։ Հերոս Վաչէն ալ ինկաւ այս պատերազմին մէջ։

Խոսրով Թագաւորեց 10 տարի։ Ան իր կեանքը պատերազմներով անցուց։ Թէև յաղթեց պարսկասէր կուսակցութեան, բայց չկրցաւ վերջ տալ անոնց փափաքներուն։

ՏԻՐԱՆ.— Խոսրովի որդին Տիրան, թոյլ և անհաստատ բնաւորութեան տէր էր։ Ինք չէր սիրեր ո՛չ Հռոմէացիները և ո՛չ ալ Պարսիկները։ Տիրան եթէ կրնար միանալ կաթողիկոսին ու նախարարներուն հետ շատ մեծ գործեր պիտի

կրնար տեսնել, որովհետև Պարսիկներն ու Հռոմայեցիք ուրիշ տեղեր պատերազմի մէջ էին։ Բայց ան չէր սիրեր նաև եկեղեցականներն ու նախարարները։ Ան ծեծի տակ սպաննել տուաւ Յուսիկ կաթողիկոսը որովհետև սա զինքը յանդիմանած էր իր անվայել կեանքին համար, և խեղդել տուաւ Դանիէլ եպիսկոպոսը, որ այս պատճառաւ հրապարակաւ զինք յանդիմանած էր։

Եկեղեցականներն ու թագաւորը, այսպէս, իրարու հետ գժտեցան։ Այս խնդրին մէջ մեծ դեր խաղաց նաև Հայր Մարդպետը, որ թագաւորի կալուածներուն վրայ կը հսկէր և հակառակ էր հոգեւորականներուն և նախարարներուն։

Շապուհ, օգտուելով Հռոմայեցւոց ուրիշ տեղ պատերազմով զբաղած ըլլալէն, խաբելով, Տիրանը իր քով տարաւ և աչքերը փորել տուաւ։ Ան կ'ուզէր Հայաստանը նորէն գրաւել։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Տրդատ յետոյ ի՞նչ վիճակի մէջ էր Հայաստանը։ Ո՞վ յաջորդեց Տրդատի եւ ինչ՞ր բրաւ։ Ինչ՞ր բրաւ Շապուհ թագաւորը։ Ի՞նչքան թագաւորեց Խոսրով։

Ո՞վ յաջորդեց Խոսրովին եւ ի՞նչպիսի մէկն էր։ Ի՞նչպէս վարուեցաւ եկեղեցականներու հետ։ Ո՞վ էր զինք գրգռողը եւ ինչո՞ւ։ Ի՞նչպէս վերջացաւ իր կեանքը։

ԴԱՍ Ի.

ԱՐՇԱԿ Բ.

ԱՐՇԱԿԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ.— Շապուհ կ'ուզէր Հայաստանը Պարսկաստանի մէկ նահանգը դարձնել, սակայն Հայերը հակառակեցան և Կոստանդ կայսրէն օգնութիւն խնդրեցին։ Կայսրը անձամբ եկաւ Հայաստան և Հայոց օգնութեամբ յաղթեց Շապուհի, որ իր ընտանիքը գերի ձգելով փախաւ։ Յետոյ հաշտութիւն եղաւ և Հայաստան Հռոմայեցւոց գերիշխանութեան տակ անցաւ։ Գերիները արձակուեցան ու Տիրանն ալ ետ դարձաւ։ Թագաւոր եղաւ Արշակ Բ. (350—368)։

Բայց նոր թագաւորին գործը դժուար էր։ Ան պիտի հանդստացնէր նախարարները և բարեկամ պիտի մնար թէ՛ Հռոմայեցիներուն և թէ Պարսիկներուն, ինչ որ դիւրին չէր։

Իրեն կապեց հռոմայեցիները նախարարները, կարեւոր պաշտօններ յանձնելով անոնց։ Լուսաւորչին ցեղէն Ներսէսն ալ, որ զարգացած ու մեծ մարդ մըն էր, նախ իր քով քարտուղարութեան առաւ և յետոյ զայն կաթողիկոս ընտրել տուաւ։

Պարսկասէր նախարարները գոհ չմնացին այս բաներէն։

Արշակ Հռոմայեցւոց հետ սիրով կ'ապրէր և կայսեր ընտանիքէն Ողիմպիադա անուն աղջկան մը հետ ամուսնացած էր։ Ան կ'աշխատէր բարեկամ մնալ նաև Շապուհին։ 13 տարի այսպէս անցաւ։

Այս ատենները Հռոմայեցիք պարտուելով Պարսիկներէն, ստիպուեցան Հայաստանի մէկ մասը Պարսից թողուլ և Հայաստանէն քաշել իրենց զօրքը։ Արշակ մնաց անօգնական։

ԱՐՇԱԿ ԿԸ ԳԺՏԻ ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍԻ ՀԵՏ.— Մեծն Ներսէսի օրով եկեղեցին ու եկեղեցականութիւնը շատ զօրացան։ Մեծն Ներսէս ամէն կողմ շինեց վանքեր որոնք լեցուեցան վարդապետներով և աբեղաներով։ Շինեց նաև դպրոցներ, հիւանդանոցներ, անկելանոցներ, օտարականոցներ և այլն և բոլորին ալ եկամուտներ սահմանեց։ Հոգեւորականները շատ հարստացեր էին և իշխաններէ աւելի աղդեցիկ էին։ Նախարարները այս բանը չէին կրնար տանիլ ու կը դըրդըռէին թագաւորը որ անոնց ձեռքէն հողերը խլէ։ Եւ որովհետև Ս. Ներսէսն ալ միշտ կը խառնուէր թագաւորի գործերուն, իրենց յարաբերութիւնները պաղեցան։ Ու երբ Արշակ ստախօս նախարարներէն խաբուելով սպաննեց Գնէլը, որ Պոլսէն նոր վերադարձեր էր և կը սիրուէր ամէնքէն, ու քիչ յետոյ ամուսնացաւ անոր Փառանձեմ անուն կնոջը հետ, Ս. Ներսէս դժտեցաւ Արշակի հետ և գործերէ քաշուեցաւ։ Անկէ յետոյ, հոգեւորականները ա՛լ կարեւորութիւն չէին տար Արշակին։

ԱՐՇԱԿ ԵՒ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ.— Բայց Արշակ դժտեցաւ նաև նախարարներուն հետ։ Թագաւորը կ'ուզէր որ անոնք իրեն հպատակին, իսկ նախարարները չէին ուզեր։ Ուստի ան Մասիսի ստորոտը շինեց նոր քաղաք մը՝ Արշակաւան՝ և հրաման հանեց թէ ո՛վ որ հոն դայ բնակի, ինչ յանցանք ալ որ գործած ըլլայ, պիտի ներուի։ Ամէն տեսակ դէշ մարդիկ հոն հաւաքուեցան։ Արշակ կ'ուզէր անոնցմէ նոր բանակ մը կազմել։ Ուստի դժգոհ նախարարները միացան ու դացին կործանեցին Արշակաւանը և բնակիչները կոտորեցին։ Ասկէ զատ Արշակ սպաննել տուաւ իրեն հակառակորդ նախարարներէն ոմանք։

Այս բաները կ'ըլլային ճիշդ ա՛յն ժամանակ երբ կայսրը կը հաշտուէր Պարսիկներուն հետ և զօրքերը կը քաշէր Հայաստանէն։ Որով, Արշակ լքուեցաւ թէ՛ Հռոմայեցիներէն, թէ՛

հայ հոգեւորականութենէն, և թէ իր նախարարներէն։

ՓԱՌԱՆՁԵՄ ԹԱԳՈՒՀԻՆ.— Արշակի իր նախարարներուն հետ ունեցած վէճերուն մէջ մեծ դեր խաղաց Փառանձեմ թագուհին։

Փառանձեմ Սիւնեաց իշխանի աղջիկն էր, գեղեցիկ և խելացի։ Ան ամուսնացած էր Գնէլի հետ, որ Արշակի եղբօրորդին էր։ Արշակ Գնէլը սպաննել տալէ յետոյ իրեն թագուհի առաւ Փառանձեմը։

Սիւնեաց իշխանները պարսկասէր ըլլալով Արշակի պալատին մէջ զօրացաւ պարսկասէրներու աղդեցութիւնը և յունասէրները ասկէ դժգոհ մնացին։ Արշակի դիրքը շատ տկարացաւ։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ բաներէ յետոյ Արշակ Բ. գահ բարձրացաւ։ Ի՞նչպէս անցան իր թագաւորութեան առաջին տարիները։ Ինչո՞ւ Արշակ զմտեցաւ Ս. Ներսէսի հետ։ Ի՞նչ գիտէք Ս. Ներսէսի մասին։ Ինչո՞ւ Արշակ զմտեցաւ նախարարներուն հետ եւ ի՞նչ բրաւ։ Ո՞վ էր Փառանձեմը եւ ի՞նչպէս թագուհի եղաւ։

ԴԱՍ ԻԱ.

ԱՐՇԱԿԻ ԵՒ ՓԱՌԱՆՁԵՄԻ ՄԱՀԸ

Արշակէն դժգոհ նախարարներէն Մեհրուժան Արծրունին, որ կ'երազէր Հայաստանի թագաւոր դառնալ, գնաց Շապուհի մօտ, ուրացաւ իր կրօնքը և Հայոց թագաւոր դառնալու խոստումը առնելով պարսիկ զօրքով եկաւ Հայաստան։ Նախարարներէն ուրիշներ ալ կային որ իրեն համաձայն էին, օրինակ՝ Վահան Մամիկոնեանը, որ, նոյնպէս իր կրօնքը ուրացաւ և ամուսնացաւ Շապուհի քրոջը հետ ու մեծ պաշտօն մը ստացաւ։ Եւ այս բաները Պարսից թագաւորին դործին կուգային, որովհետև ան կ'ուզէր կործանել Արշակունեաց թագաւորութիւնը, Հայերը կրակապաշտ դարձնել ու Հայաստանը իր երկրին կցել։

Մեհրուժան և Վահան շատ անգթութիւններ գործեցին Հայաստանի մէջ։ Անոնք նոյնիսկ քանդեցին Արշակունի թագաւորներուն գերեզմանները և ոսկորները դուրս հանեցին։ Բայց Արշակի հետ մնացեր էր հերոս Վասակ Մամիկոնեանը, որ մէկ քանի անգամ յաղթեց այս ուրացող իշխաններուն։

Երբ Արշակ բոլորովին անօգնական մնաց, Շապուհի հրաւէրով գնաց Պարսկաստան իր Վա-

սակ սպասրապետին հետ։ Շապուհ, հակառակ որ խօսք տուած էր Արշակին թէ ինչպէս պիտի չհասցնէ իրենց, երկուքն ալ բանտարկեց Անյուշ բերդը, ուր Վասակը մորթազերծ ըրաւ, իսկ Արշակ անձնասպան եղաւ։

Շապուհ, ապա զօրք դրկեց Հայաստան։ Փառանձեմ թագուհին իր Պապ որդիին հետ ամրացաւ Արտագերս բերդին մէջ։ Վասակի որդին Մուշեղ, ուրիշ իշխաններու հետ դիմեց Վաղէս կայսրին, իսկ Պապ կորելով պարսից շղթան դուրս եկաւ բերդէն, զօրք ժողվեց և նեղութիւններ տուաւ Պարսից որոնք զուր աշխատեցան զինքը բռնել։

Բայց Արտագերս բերդը ինկաւ և Պարսիկները Հայոց քաջ և գեղանի թագուհին՝ Փառանձեմը՝ գերի տարին ու վատաբար սպաննեցին։

Յետոյ, պարսից զօրքը ցրուեցաւ Հայաստան և գրաւեց բերդերը, մինչև որ օգնութեան հասան հռոմէական զօրքերը։

ՀԱՅՐՑՈՒՄՆԵՐ.— Ո՞վ էր Մեհրուժան Արծրունին եւ ի՞նչ կ'նշանակէր։ Ո՞վ էր Վահան Մամիկոնեանը եւ ի՞նչ բրած էր։ Ինչե՞ր բրին Հայաստանի մէջ այս ուրացող իշխանները, ի՞նչ ստիպուեցաւ ընել Արշակ։ Ի՞նչ դէպքեր պատահեցան Հայաստանի մէջ եւ ի՞նչ եղաւ Փառանձեմը։

ԴԱՍ ԻԲ.

ՊԱՊ

Մեր զօրեղ և հեռատես թագաւորներէն մէկը եղաւ Պապը, որ թագաւորեց 369—374 թուականին։

Պապ երիտասարդ էր երբ գահ բարձրացաւ։ Անիկա կ'ուզէր հաշտ ապրիլ թէ՛ Հռոմի և թէ Պարսկաստանի հետ։ Ուստի աշխատեցաւ իրեն կապել պարսկասէր նախարարները։ Բայց Մուշեղ և Տերենդիոս յոյն զօրապետը դժգոհ մնացին։

Պապ շատ կը յարգէր նաև Ս. Ներսէսը, զոր նորէն պաշտօնի կոչեց։ Ներսէս սկսաւ շարունակել իր կէս ձգած գործը։ Նորէն աղքատանոցներ, հիւանդանոցներ, որբանոցներ, կուսանոցներ սկսան շինուիլ ամէն կողմ։ Եկեղեցիներն ու վանքերը շատցան և մեծամեծ ծախսերու դուռ բացին ժողովրդեան համար, որ պատերազմներէն արդէն աղքատացած էր։ Ներսէս նորէն մեծ աղդեցութիւն ձեռք բերաւ և կ'ուզէր որ թագաւորն ալ իրեն ենթարկուի։ Իսկ թագաւորը կ'ուզէր որ ամէն բան իր ձեռքը կեդրոնանայ։

Այս ատեններ յանկարծ մեռաւ Ս. Ներսէսը և Պապը ինքզինքը աղատ զգաց։ Ան կ'ուզէր որ եկեղեցականները իրեն ենթարկուին։ Ուստի չձգեց որ Ներսէսի յաջորդը՝ Յուսիկ Բ.՝ կեսարիա

երթայ յոյն եպիսկոպոսէն կաթողիկոս ձեռնադրուելու, այլ հայ եպիսկոպոսներէն ձեռնադրել տըուաւ։ Պապի օրով Հայոց եկեղեցին անկախ դարձաւ։

Յետոյ ան փակեց Ներսէսի հիմնած բարեգործական հաստատութիւններէն շատերը։ Աղքատներուն հրամայեց աշխատիլ, վանքերու, եկեղեցիներու կալուածները ետ առաւ և գիւղացիներու վիճակին հոգ տարաւ։ Մէկ խօսքով ան կ'ուզէր բարեկարգ և զօրաւոր Հայաստան մը ունենալ, բայց զոհ գնաց յունասէր նախարարներու դաւին։ Վաղէս կայսրը, հաւատալով Պապի հակառակորդներուն, իր քով՝ Կիլիկիա կանչեց Հայոց երիտասարդ թագաւորը։ Պապ գնաց և պատիներով ընդունուեցաւ։ Բայց յետոյ կասկածելով թէ կայսրը զինքը պիտի ձերբակալէ, բանակէն փախաւ եկաւ Հայաստան։ Եւ կայսրը կասկածելով թէ Պապը Պարսից կողմը պիտի անցնի, հրամայեց իր զօրապետին որ զայն սպաննէ։ Յոյն զօրապետը ճաշի հրաւիրեց Պապը և դաւաղրութեամբ զայն սպաննեց։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչպիսի բագաւոր մը եղաւ Պապը եւ ի՞նչ կ'ուզէր։ Ի՞նչ բրաւ Ս. Ներսէսը եւ ինչո՞ւ զժտեցաւ Պապին հետ ալ։ Ի՞նչպէս եղաւ որ Հայ եկեղեցին անկախ դարձաւ։ Յետոյ ինչե՞ր բրաւ Պապը եւ ի՞նչպէս մեռաւ։

ԴԱՍ ԻԳ.

ԱՐՇԱԿ ԵՒ ՎԱՂԱՐՇԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Պապի մահը գայրացուց նախարարները. անոնք պահ մը մտածեցին Պարսից կողմն անցնիլ, բայց տեսնելով թէ ատիկա աւելի վտանգաւոր պիտի ըլլայ, որոշեցին նորէն Վաղէսին դիմել և նոր թագաւոր մը խնդրել։ Կայսրը թագաւոր նշանակեց երիտասարդ և քաջ Վարազդատը, ակնջ չկախելով Շապուհին, որ կ'առաջարկէր Հայաստանը բաժնել իրենց միջև։

Նոր թագաւորը թէև քաջ բայց բաւականաչափ խելացի մէկը չէր։ Եւ Մուշեղ Մամիկոնեանը կը հսկէր անոր վրայ որ Հռոմայեցւոց հետ բարեկամ մնայ։ Իսկ թագաւորը կ'ուզէր բարեկամանալ Պարսից հետ։ Ասոր վրայ թշնամութիւն ինկաւ իր և Մուշեղի միջև։ Իսկ երբ Մուշեղ կայսեր առաջարկեց որ Պարսից և Հոնաց դէմ գներու համար սահմաններու վրայ բերդեր շինէ և զանոնք հռոմէական զօրքերով լեցնէ, հակառակորդ նախարարները վարազդատը համոզեցին թէ՝ Մուշեղ Հայաստանը Հռոմայեցւոց տալ կ'ուզէ. թագաւորը հաւատալով ճաշի կանչեց Մուշեղը և զայն սպաննեց։ Ասոր վրայ Մանուէլ Մամիկոնեան դիւցազն նախա-

բարը մեծ պատերազմի մը մէջ յաղթեց Վաղարշապատի, Հայաստանէն վռնտեց զայն և ինք եղաւ իշխանապետ։

Մանուէլ 7 տարի կառավարեց երկիրը խաղաղութեամբ։ Պարսիկները զինքը կը սիրէին, իսկ Կայսրը ուրիշ տեղ զբաղած էր։ Մանուէլ ջնջեց Պապի կարգադրութիւնները և վերանորոգեց Ս. Ներսէսի գործը։ Հայաստան խաղաղ շրջան մը ունեցաւ նորէն։ Մանուէլ Պապի կինը՝ Զարմանդուխտ՝ թագուհի յայտարարեց և անոր երկու փոքր զաւակները՝ Արշակ և Վաղարշակ՝ թագաւոր ըրաւ։ Իր աղջիկը տուաւ Արշակին և ինք եղաւ թագաւորահայր, բարեկամանալով Պարսից հետ։ Շապուհ շատ գոհ մնաց և նուէրներ ղրկեց Մանուէլին, իսկ Արշակի և Վաղարշակի ալ՝ թագեր։ Շապուհ Սուրէն զօրապետն ալ զօրքով ղրկեց Հայաստան զայն պաշտպանելու համար։

Սակայն քիչ յետոյ մեռաւ Վաղարշակը և Արշակ Գ. մինակ թագաւորեց։

Աւելի վերջը Մեհրուժան թշնամութիւն ձգեց Մանուէլի և Սուրէնի միջև։ Անոնք նոյնիսկ պատերազմեցան և Սուրէն յաղթուեցաւ։ Այս կռիւին մէջ ինկաւ փառասէրն Մեհրուժան։ Քիչ յետոյ մեռաւ նաև Մանուէլը։

Արշակ երիտասարդ էր ու չկրցաւ զսպել նախարարները։ Պարսկասէրները Շապուհի դիմեցին և նոր թագաւոր մը խնդրեցին։

Թէոդոս կայսրը, որ ուրիշ կողմ զբաղած էր պատերազմով, ուզեց հաշտուիլ Պարսից հետ. առաջարկեց բաժնել Հայաստանը. Շապուհ Գ.ի ուղածն էր այդ. Բարձր Հայքը և Ծոփքը Հռոմայեցւոց անցաւ իսկ մնացեալը՝ Պարսից։ Արեւմտեան կամ ցունաց Հայաստանը շատ փոքր էր, բայց կարեւոր էր կայսեր համար։

Արշակ չուզեց մնալ պարսկական բաժնի մէջ և խումբ մը նախարարներու հետ անցաւ յունաց բաժինը, որուն մայրաքաղաքն էր Կարին։

Հայաստանի այս առաջին բաժանումը տեղի ունեցաւ 384 թուին։

Թէոդոս կայսեր այս յիմար քայլը քանդեց 500 տարիներէ ի վեր Հռոմայեցւոց կերտած ամբողջ գործը։ Ան տկարացուց Հայաստանը և ճամբայ բացաւ բարբարոսներուն առջև։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Պապի մահէն յետոյ ի՞նչ խորհեցան նախարարները եւ ո՞վ եղաւ թագաւոր։ Ի՞նչպիսի մէկն էր Վարազդատը, ի՞նչ կը փափաքէր եւ ի՞նչ եղաւ վերջը։ Ի՞նչ գործեր տեսաւ Մանուէլ Մամիկոնեանը։ Ի՞նչպէս մեռաւ Մեհրուժանը։ Ի՞նչ ուզեց ընել Թէոդոս կայսրը։ Ե՞րբ եւ ի՞նչ ձեւով բաժնուեցաւ Հայաստանը առաջին անգամ։ Ի՞նչ ըրաւ Արշակ Գ.։

ԴԱՍ ԻԴ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՈՒ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԽՈՍՐՈՎ Դ.— Շապուհ Գ. անմիջապէս չի վերջացուց Արշակունեաց Թագաւորութիւնը։ Ան իր բաժնի վրայ Թագաւոր դրաւ Խոսրով, որ Արշակունի էր։ Ասոր վրայ յունաց բաժին գացող նախարարներէն շատերը իրենց տեղերը վերադարձան. չեկողներուն կալուածները Խոսրով գրաւեց։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ.— Այս կերպով յառաջ եկաւ երկու Թագաւորութիւն։ Քիչ վերջ անոնց մէջ կռիւ ծագեցաւ և Արշակ յաղթուեցաւ։ 386ին մեռաւ Արշակ և Թէոդոս կայսրը ա՛լ իր բաժնի Հայաստանի վրայ Թագաւոր չդրաւ և զայն դարձուց իր երկրին մէկ նահանգը։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ.— Իրենց Թագաւորին մահէն յետոյ հայ նախարարները չուզեցին ենթարկուիլ Յունաց։ Խոսրովէն խնդրեցին իրենց կալուածները ետ տալ որ վերադառնան։ Այդպէս ալ եղաւ։ Խոսրով Հայոց կաթողիկոս ըրաւ Մեծն Ներսէսի որդին Սահակ Պարթեւը։

Յետոյ կայսրէն խնդրեց զինքը ճանչնալ նաև յունաց բաժնի Թագաւոր և կայսրը ընդունեց։ Որով Հայաստանը նորէն միացաւ։ Բայց այս բաները պարսկասէր նախարարներուն հաճելի չթուեցան։ Անոնք Վռամ Դ.ին դիմեցին և Խոսրովը ներկայացուցին իբրև յունասէր։ Վռամ Պարսկաստան կանչեց Խոսրովը, գահէն զրկեց և աքսորեց Անյուշ բերդը, իսկ Սահակ Պարթեւը աթոռէն զրկեց։

ՎՌԱՄՇԱՊՈՒՀ.— Վռամ Հայոց Թագաւոր նշանակեց Վռամշապուհը 390ին, որ Խոսրովի եղբայրն էր։ Նոր Թագաւորը հեռատես և իմաստուն էր։ Ան Սահակ Պարթեւը պարսից արքային քով զրկեց։ Առաջին անգամն էր որ Լուսաւորչի ցեղէն կաթողիկոս մը պարսից Թագաւորին քով կ'երթար։ Վռամ մեծ պատիւներ ըրաւ կաթողիկոսին, վերադարձուց անոր իշխանութիւնը և ընդունեց անոր բոլոր խնդրանքները։

Վռամշապուհ 25 տարի խաղաղ կերպով Թագաւորեց։ 40 ամեայ խաղաղութեան տարիներէն յետոյ, այս նոր շրջանին, Հայաստան շունչ առաւ։ Այս ատենն էր որ տեղի ունեցաւ Գրոց Գիւտը։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Արշակէ յետոյ ո՞վ եղաւ Հայոց թագաւոր։ Ի՞նչ գիտէք Արեւմտեան Հայաստանի հայ թագաւորութեան մասին. ի՞նչպէս վերջացաւ ան։ Ի՞նչ գիտէք Արեւելեան Հայաստանի մասին։ Որո՞նք եղան թագաւոր եւ ի՞նչ գործեր տեսան անոնք։ Ո՞ր թագաւորին օրով տեղի ունեցաւ Գրոց Գիւտը։

ԴԱՍ ԻԵ.

ԳԻՐԵՐՈՒ ԳԻՒՏԻՆ ՊԱՏՃԱՌԸ.

ԳԻՐԵՐՈՒ ԳԻՒՏԻՆ ՊԱՏՃԱՌԸ.— Քրիստոնէութիւնը Հայոց մէջ քարոզուեցաւ նախ Թադէոս և Բարթողէմէոս առաքեալներու միջոցաւ, սակայն չկրցաւ արմատ բռնել։ Երկրորդ անգամ քարոզուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի կողմէ և այս անգամ թէպէտ ան յաջողեցաւ, բայց Հայաստանի շատ մը վայրերուն մէջ մարդիկ դեռ կը շարունակէին հեթեւիլ հին կրօնքին։ Ասոր պատճառն ալ այն էր որ հայերէն գիրեր չկային. եկեղեցիներու մէջ Ս. Գիրքը յունարէն կամ ասորերէն լեզուով կը կարդային և ժողովուրդը շատ բան չէր հասկնար նոր կրօնքէն։

Պապ թագաւորը թէև հայ եկեղեցին անկախ դարձուց, սակայն հայ եկեղեցականները, գրերու չգոյութեան պատճառաւ, ստիպուած էին ասորերէն և յունարէն սորվիլ և այդ լեզուներով կատարել եկեղեցական արարողութիւնները։

Վռամշապուհի թագաւորութեան ժամանակ Հայոց համար սեփական գիր գտնելու խնդիրը շատ մեծ կարեւորութիւն մը ստացած էր։

Այս կարեւորութիւնը աւելի շեշտեց Ս. Մեսրոպը երբ Հայաստանի արեւելեան գաւառները քարոզչութիւն ընելէ վերադարձաւ Վաղարշապատ Ս. Սահակի և Վռամշապուհի մօտ։ Ս. Մեսրոպ անոնց բացատրեց սեփական գիրեր գտնելու անհրաժեշտութիւնը։ Կաթողիկոսն ու թագաւորը որոշեցին ուժ տալ Ս. Մեսրոպին։

ԻՆՉՊԷՍ ԳՏՆՈՒԵՑԱՆ ԳԻՐԵՐԸ.— Սեփական գիրեր գտնելու գաղափարը Պարսից տէրութեան ալ հակառակ չէր, քանի որ անոնք ալ կ'ուզէին որ Հայերը Յոյներէն բոլորովին զատուին։ Ուստի Ս. Մեսրոպ որոնումներու ելաւ։ Այդ գիւտը տեղի ունեցաւ Սամուսատ քաղաքին մէջ։ Այս դէպքը այնքան մեծ ու կարեւոր էր Հայոց համար, որ ժողովուրդը ատոր մէջ Աստուծոյ մատը տեսաւ։

Ս. Մեսրոպ իր նոր գիրերը Հռոփանոս անուն գեղագիրի մը ցուցուց որ աւելի դեղեցկացուց զանոնք և բերաւ Հայաստան։ Այդ օրը Հայոց համար մեծ օր մըն էր։ Այս գիւտը եղաւ 412 թուականին։

ԳՐՈՑ ԳԻՒՏԻՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ.— Ս. Սահակ և Ս. Մեսրոպ անմիջապէս աշակերտներ հաւաքեցին, անոնց սորվեցուցին հայերէնը և սկսան

թարգմանութիւններու։ Եկեղեցիներու մէջ ժամերգութիւնները սկսան հայերէն կատարուիլ և քրիստոնէութիւնը աւելի տարածուեցաւ։ Ամէն կողմ բացուեցան վանքեր և անոնց կից դպրոցներ։ Ամենէն կարեւոր դպրոցն էր Վաղարշապատինը։

Ս. ՄԵՍՐՈՊ

Յետոյ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ 40 ի չափ ընդունակ աշակերտներ դրկեցին այն ատենուան նշանաւոր քաղաքները, —Աղեքսանդրիա, Աթէնք և Պոլիս— որ աւելի բարձր կրթութիւն ստանան։ Այս աշակերտները երբ վերադարձան, իրենց հետ բերին Աստուածաշունչի լաւ օրինակներ, որոնց վրայէն Ս. Սահակ և Ս. Մեսրոպ իրենց նախապէս կատարած թարգմանութեանց պակասները լրացուցին։ Այս թարգմանութեամբ հայոց լեզուն ալ մշակուեցաւ և կատարեալ ե-

ղաւ։ Գիրերու գիւտով Հայը իր կիսավայրենի վիճակէն դուրս եկաւ և Ազգ մը եղաւ։

Ս. Սահակ, Ս. Մեսրոպ և իրենց աշակերտները կը կոչուին Թարգմանիչներ, իսկ իրենց շրջանը եղաւ մեր Ոսկեդարը։

Ս. Մեսրոպ Աղուանիստան և Վրաստան երթալով անոնց համար ալ գիրեր գտաւ։ Յետոյ անցաւ Պոլիս, ներկայացաւ Թէոդոս Բ. կայսրին և յունաց պատրիարքին ու յունաց բաժնի Հայաստանի մէջ ալ քարոզելու և սորվեցնելու արտօնութիւն ստացաւ։

Գիրերու գիւտով Հայ ազգը զատուեցաւ Արեւելքէն եւ մտով կապուեցաւ Եւրոպայի։ Իսկ ասիկա շատ մեծ հետեւանքներ ունեցաւ մեր ազգին համար։ Մենք դարձանք եւրոպական գաղափարներու և եւրոպական քաղաքակրթութեան տարածիչը արեւելքի մէջ։

Մինչև այսօր ալ այսպէս է տակաւին։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Գրոց գիւտէն առաջ ի՞նչպէս էր Հայոց մտաւոր եւ հոգեւոր վիճակը։ Որո՞նք են Գրոց Գիւտին պատճառները։ Ի՞նչպէս, ե՞րբ եւ որո՞ւն կողմէ գտնուեցան մեր գիրերը։ Ի՞նչ եղաւ Գրոց Գիւտին հետեւանքը։

ԴԱՍ ԻԶ.

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

ԽՈՍՐՈՎ, ՇԱՊՈՒՀ ԵՒ ԱՐՏԱՇԷՍ.— Պարսից Ցաղկերտ Ա. Թագաւորը Խոսրովը Անյուշ բերդէն հանելով կրկին նստեցուց Արշակունեաց գահուն վրայ։ Բայց Խոսրով միայն 8 ամիս ապրեցաւ։ Ցաղկերտ Հայոց վրայ Թագաւորցուց իր որդին Շապուհը, որ կամաց կամաց պիտի պարսկացնէր նախարարները. բայց հայ իշխանները բնաւ չսիրեցին զինքը և զայն կ'անարգէին։ Շապուհ երբ ծածուկ Հայաստանէն փախաւ Պարսկաստան՝ իր հօրը յաջորդելու համար, պատուիրեց իր զօրապետին որ ձերբակալէ նախարարները և իրեն ղրկէ։ Հայերը միաբանեցան և ջարդեցին պարսից զօրքը, հրամանատարն ալ սպաննեցին։ Վռամ Ե. նոր բանակ մը ղրկեց Հայերը պատժելու, բայց Սահակ Պարթև հաշտեցուց նախարարները Վռամի հետ, որ Հայոց վրայ Թագաւոր դրաւ Վռամշապուհի որդին Արտաշէսը (422—428)։ Սակայն այս երիտասարդ Թագաւոր

ը անարժան մէկն էր և անփորձ։ Նախարարները խորհուրդ ըրին և որոշեցին դիմել Վռամին որ գահընկեց ընէ Արտաշէսը։ Անոնք կաթողիկոսէն ալ պահանջեցին որ իրենց միանայ, սակայն հեռատես կաթողիկոսը խնդրեց իրենցմէ որ չընեն այդ բանը. «Մեր հիւանդ ոչխարը օտար առողջ գայլէն աւելի լաւ է» պատասխանեց։ Նախարարները բարկացան կաթողիկոսին ալ և դիմեցին Վռամին, գանգատելով թէ՛ Թագաւորին և թէ կաթողիկոսին մասին։ Պարսից Թագաւորին ուզածն էր այդ։ Ան իր քով կանչեց Թագաւորն ու կաթողիկոսը, երկուքն ալ պաշտօնանկ ըրաւ և չձգեց որ Հայաստան վերադառնան։

Վռամ Հայաստանը ըրաւ Պարսկաստանի մէկ նահանգը և ղրկեց Վեհմիհրշապուհ մարզպանը զայն կառավարելու համար։ Սուրմակ անուն եպիսկոպոսն ալ կաթողիկոս նշանակեց։ Այս նշանաւոր դէպքը տեղի ունեցաւ 428 թուականին։

Այսպէս վերջացաւ Արշակունեաց Թագաւորութիւնը, որ տեւեց 362 տարի։ Սահակ Պարթեւով կը վերջանայ նաև Լուսաւորչի ցեղին կաթողիկոսութիւնը։

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.—Արշակունեաց Թագաւորու-

թեան կործանման գլխաւոր պատճառներն են.—

1.— Հայաստան կը գտնուէր երկու հակառակորդ մեծ պետութիւններու մէջտեղը — Հռոմի և Պարսկաստանի, որոնք կ'ուզէին տիրել մեր երկրին։

2.— Արշակունի թագաւորներուն մէջ խեղճացի և զօրաւոր մարդիկ քիչ եղան և չկրցան նախարարները միացնել։

3.— Լուսաւորչի ցեղէն կաթողիկոսները միշտ յունասէրներու կողմը բռնեցին։

4.— Հայ ժողովուրդը դեռ կրթուած չէր։

Բայց, ինչքան որ թագաւորութիւնը կործանեցաւ, երկիրն ալ երկուքի բաժնուեցաւ, կը մնար սակայն նախարարութիւնը, զօրաւոր էր եկեղեցին և Հայը գտած էր իր դիրը, որ ղինքը նոր ի նորոյ ազգ պիտի դարձնէր ու քաղաքակրթուած ազգերու կարգը անցընէր։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Որո՞նք եղան Արշակունեաց Հարստութեան վերջին երեք թագաւորները, ի՞նչ գիտէք անոնց իւրաքանչիւրի մասին: Որո՞ւն օրով վերջացաւ Արշակունեաց թագաւորութիւնը եւ ի՞նչպէս: Անկէ յետոյ Հայաստանը ի՞նչպէս կառավարուեցաւ: Ի՞նչքան տեւեց Արշակունեաց Հարստութիւնը: Որո՞նք են Արշակունեաց թագաւորութեան անկման պատճառները: Ի՞նչպէս տեւեց ուրեմն մեր ազգը:

ԴԱՍ ԻԷ.

ՀԱՅՈՑ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՔԸ ԱՐՏԱՇԷՍԵԱՆ ԵՒ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՕՐՈՎ

ԹԱԳԱՒՈՐՆ ՈՒ ՅԱՋՈՐԴՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԸ.— Հայ թագաւորները եղած են բացարձակ միապետներ։ Մնացեալ բոլոր մարդիկը իրենց ծառաներն էին։ Հայ թագաւորը օրէնսդիր էր, զօրքին վերին հրամանատարը, դատաւորը և հեթանոսութեան շրջանին՝ նաև քրմապետը։ Իր իշխանութիւնը ժառանգական էր. անդրանիկ զաւակը կը յաջորդէր հօրը։

Ուրիշ ազգերու կառավարութեան ձեւն ալ ասկէ տարբեր չէր։

ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Սակայն հայ թագաւորը իր շուրջը ունէր խորհրդականներ և բարձր պաշտօնեաներ, որոնք կը կոչուէին նախարար։

Այս նախարարներու ծագման պատմութիւնը որոշ չէ։ Անոնցմէ շատերը հին ուրարտական շրջանէն մնացած էին։ Ուրեմն անոնք բնիկ էին։

ինչպէս բնիկ էին Արտաշէսեան Հարստութեան թագաւորները։ Բայց Արշակունիները եկեւոր էին, Պարթև, և հետզհետէ հայացան։

Սակայն այս նախարարները իրենց ծագման մասին զանազան պատմութիւններ չինած էին։

Տրդատ Ա.ի օրով հայ նախարարութիւններու մէջ կարգ ու կանոնը աւելի որոշ դարձաւ, բայց անոնք աւելի զարգացան Տրդատի յաջորդներու օրով, պարսից ազդեցութեան տակ։

Տրդատ Բագրատունի նախարարներուն տուաւ բագադիր ասպետութեան իրաւունքը. Մամիկոնեաններուն՝ սպարապետութիւն։ Արշակունեաց օրով հայոց բանակը 120,000 անձ կը հաշուէր։ Կարեւոր պաշտօն էր նաև հազարապետութիւնը։ Այս պաշտօնը Տրդատ յանձնած էր Գնունիներուն։ Թագաւորի թիկնապահ գունդերու հրամանատարն էր Խորխոռունեաց տունը, որ կը կոչուէր մաղխազ։ Իսկ Թագաւորի կալուածներու, դանձերու, ամրոցներու և կանանոցի պահպանութիւնը տրուած էր Մարդպետականներուն և պաշտօնեան կը կոչուէր Հայր-Մարդպետ, որ փորձառու և խելացի մարդ մը պէտք էր ըլլար։

Կային տակաւին ուրիշ շատ մը պաշտօններ։

Կային նաև բդեշխներ, որոնք զօրաւոր նախարարներ էին և իրենց պաշտօնն էր Հայաստանի սահմանները պաշտպանել։ Բդեշխներ էին Սիւնեաց, Գուգարաց, Աղձնեաց և Կաղմէանց իշխանները։

Հայ նախարարներու թիւը առաջ 70ի չափ էր, բայց քրիստոնեայ Արշակունիներու օրով անոնք շատցան, որովհետև Արշակունի թագաւորները սովորութիւն ունէին իրենց լաւ ծառայութիւն մը ընողին հողեր տալու և նախարարութեան աստիճանին բարձրացնելու։

Այնպէս որ քրիստոնեայ Արշակունիներու օրով երկիրը բաժնուեցաւ մանր մասերու։ Այս նախարարութիւններուն ամենէն հիներն էին Սիւնեաց և Աղձնեաց բդեշխութիւնները, որոնցմէ յետոյ կուգային Մամիկոնեաններու, Բագրատունիներու, Արծրունիներու, Խորխոռունիներու, Կամսարականներու և Ծոփաց ու Մոկաց նախարարութիւնները։

Նախարարին իշխանութիւնն ալ ժառանգական էր, անդրանիկը հօրը կը յաջորդէր։

Նախարարութիւնը պզտիկ թագաւորութիւն մըն էր։ Նախարարը ունէր իր ամրոցները, զօրքը և շատ անգամ իրարու դէմ կամ թագաւորին դէմ կռիւի կ'ելլէր։ Այս դրութիւնը Հայաստանի տկարութեան գլխաւոր պատճառներէն մէկն էր։

Նախարարը կը կառավարէր իր երկիրը և պարտաւոր էր տուրք և զօրք տալ Թագաւորին։

Թագաւորը կրնար օրէնքներ դնել, բայց նախարարներն ալ իրենց երկրին մէջ օրէնքներ կը դնէին։ Դատական իշխանութիւնը հոգեւորականներուն կը պատկանէր, բայց նախարարներն ալ ունէին այդ իրաւունքը։ Ամենամեծ դատաւորը Թագաւորն էր։

Ամէն նախարար իր սեփական դրօշակն ունէր։ Թագաւորն ալ ի՛նը։

Նախարարները պարտաւոր էին երդումով հաւատարմութիւն ուխտել Թագաւորին. Թագաւորն ալ կը խոստանար տէր և խնամակալ ըլլալ անոնց։ Երդման խորհուրդը աղն էր։

Երբ նախարարները Թագաւորին քով հաւաքուէին, իրենց որոշ տեղերը՝ բարձերը՝ ունէին։ Առաջին բարձն ու պատիւը Սիւնեաց իշխանին էր, երկրորդը՝ Բագրատունեաց, երրորդը՝ Արծրունեաց, չորրորդը՝ Մամիկոնեանց, և այլն։

Նախարարութիւնները մնացին, մինչ Արշակունեաց Թագաւորութիւնը կործանեցաւ։ Անոնք մեծ դեր խաղացին նաև Միջին Դարերու մէջ և շարունակեցին մնալ մեր պատմութեան առանցքը։

ՔԱՂԱՔԱՑԻՔ ԵՒ ԳԻՒՂԱՑԻՔ.— Քաղաքացիները կ'ապրէին քաղաքներու մէջ և կը զբաղէին առեւտուրով ու արհեստներով։ Բայց, ինչպէս հիմա, առաջ ալ հայ ժողովուրդին մեծ մասը կ'ապրէր գիւղերու մէջ և կը զբաղէր հողագործութեամբ ու անասնապահութեամբ։ Այս դասը կը կոչուէր շինական։ Ունէին իրենց գիւղապետները և հարկատու էին նախարարներուն, իսկ ասոնք ալ՝ Թագաւորին։ Հարկերը կուտային հում նիւթերով, նաև աշխատանքով։ Պետութեան հասոյթներուն ծանրութիւնը շինականին վրայ ինկած էր։

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Հայոց Թագաւորները, նաև իշխանները, շատ կը սիրէին որսորդութիւնը, որուն համար նոյնիսկ մասնաւոր անտառներ պատրաստել կուտային և որսի կենդանիներով կը լեցնէին։ Մեծ բազմութեամբ կ'երթային որսի, որ երբեմն ալ ոճիրով կը վերջանար։

Քրիստոնէութենէ առաջ, Թագաւորներն ու իշխանները բազմակին էին, բայց Թագուհին մէկ էր։

Հարսանեկան և Թաղման հանդէսները շատ փառաւոր կ'ըլլային։

Հեթանոսութեան ատեն մանաւանդ, Հայոց մէջ տարածուած էր վրիժառութեան սովորութիւնը։ Ցանցաւորը շատ անգամ կը յանձնէին սպաննուածի տիրոջ դատաստանին։ Քրիստոնէութիւնը աշխատեցաւ վերջ տալ Հայոց հին, բարբարոսական սովորութեանց։

ԵԿԵՂԵՑԻՆ.— Հեթանոսութեան ատեն քուրմերը մեծ ազդեցութիւն ունէին երկրի գործերուն մէջ։ Հին մեհեանները ունէին մեծամեծ կալուածներ և հարուստ էին։

Երբ Հայերը քրիստոնէութիւնը ընդունեցին և մեհեաններու տեղ բարձրացան եկեղեցիներ ու վանքեր, այս վերջինները շատ աւելի հարստացան և հոգեւորականներու ազդեցութիւնը աւելի մեծցաւ։

Մինչև Պապ թագաւորը Հայոց կաթողիկոսները Կեսարիոյ յոյն մեթրոպոլիտէն կ'ստանային իրենց բարձր աստիճանը։ Բայց Պապ վերջ տուաւ ատոր։ Հայոց եկեղեցին անկախ եղաւ։

Հայոց կաթողիկոսները մինչև Սահակ Պարթև հայրապետը, Լուսաւորչի ցեղէն կ'ըլլային, (հին ատեն մինչև իսկ կաթողիկոսները կ'ամուսնանային)։ Կար նաև ուրիշ նշանաւոր ցեղ

մը՝ Աղբիանոսի տունը՝ որ Լուսաւորչի ցեղին մրցորդն էր։ Լուսաւորչի ցեղէն կաթողիկոսները յունասէրներու կողմը բռնեցին միշտ, իսկ պարսկասէրները կ'ուզէին որ Աղբանիոսի տունը բաղմի կաթողիկոսական աթոռին վրայ։

Լուսաւորչի ցեղին կաթողիկոսութիւնը վերջանալէն յետոյ կաթողիկոսները սկսան ընտրուիլ, առաջ յաջորդութիւնը ժառանգական էր։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ գիտէք հայ թագաւորներու մասին: Ի՞նչ գիտէք հայ նախարարներու մասին: Ի՞նչ պատուոցներ կային: Քանի՞ բդեշխութիւններ կային: Նախարար մը ինչ՞ կ'ունենար եւ ի՞նչ իրաւունքներ ունէր:

Ի՞նչ գիտէք քաղաքացիներու եւ գիւղացիներու մասին: Ի՞նչ սովորութիւններ կային հին Հայոց մէջ:

Ի՞նչ գիտէք հայ եկեղեցիին եւ Լուսաւորչի ցեղէն կաթողիկոսներու մասին:

ՀԱՅԿԱԶՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՎԵՐՋ

ՅԱՆԿ ՆԻՒԹԵՐՈՒ

ԳԱՍ

ՄԱՍՆ Ա.

Էջ

Ա. Հայաստան Հայերէ առաջ — Նայիր-Ուրարտու 5

Բ. Նայիր-Ուրարտացւոց քաղաք. պատմութիւնը . 8

ՄԱՍՆ Բ.

Գ. Հայոց ծագումը 11

Դ. Հայաստան, Հայոց զբաղումը 13

Ե. Հին Հայոց կրօնքը 15

Զ. Հայաստան Մարաց, Պարսից եւ Սելեւկեան իշխանութեան տակ 17

ՄԱՍՆ Գ.

Է. Արտաշէսեան Հարստութիւն — Արտաշէս Ա. . . 19

Ը. Տիգրան Գ. Մեծը 22

Թ. Մեծն Տիգրանի պատերազմները 25

Ժ. Տիգրանի կայսրութեան քայքայումը 28

ԺԱ. Արտաւազդ Բ. 33

ԺԲ. Արտաւազդ եւ Անտոնիոս 36

ԺԳ. Արտաշէսեան Հարստութեան կործանումը եւ օտար թագաւորներ 38

ՄԱՍՆ Դ.

ԺԴ. Արշակունեաց թագաւորութիւնը — Տրդատ Ա. 41

ԺԵ. Հայաստան Տրդատ Ա. էն յետոյ 46

ԺԶ. Սասանեանները եւ Հայերը 49

ԺԷ. Քրիստոնէութեան մուտքը Հայաստան - Տրդատ Գ. եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ 52

ԺԸ. Հայաստան քրիստոնէութիւնը ընդունելէն յետոյ 55

ԺԹ. Տրդատ Գ.ի յաջորդները 58

Ի. Արշակ Բ. 61

ԻԱ. Արշակի եւ Փառանձեմի մահը 65

ԻԲ. Պապ 67

ԻԳ. Արշակ եւ Վաղարշակ — Հայաստանի առաջին բաժանումը 69

ԻԴ. Հայաստանի երկու թագաւորութիւնները . . . 72

ԻԵ. Գիրերու գիւտը 74

ԻԶ. Արշակունեաց թագաւորութեան անկումը . . . 78

ԻԷ. Հայոց ներքին կեանքը 81

ԴԱՌՆ ՀԱՅԻՆԱԿԱՆ

1.— Հայոց Պատմութիւն, Տարրական Գին 6 մ. գ.

2.— Հայոց Պատմութիւն, Շարք Ա., Գիրք Ա.
Հին Դարեր ,, 6 ,,

3.— Հայոց Պատմութիւն, Շարք Ա., Գիրք Բ.
Միջին եւ Նոր Դարեր ,, 10 ,,

4.— Հայոց Պատմութիւն,
Միջին Դարեր (ընդարձակ) ,, 12 ,,

5 — Հայոց Պատմութիւն, Նոր Դարեր եւ
ժամանակակից Շրջան (ընդարձակ) ,, 15 ,,



Ամէն ապագրաՅՔ կանխիկ

Դիմել հետեւեալ հասցէին՝

L. ADJÉMIAN

B. P. 1060

LE CAIRE (Egypte)

Printed in Egypt.
by HAGOP PAPAZIAN Press
Ibrahim Pacha, Haret Faïed, 6
CAIRO (Egypt)

186

2813